Azg Ազգ

22 ԱՊՐԻԼ 2011 ՈՒՐԲԱԹ 72(4691)

ISSN: 1829-1651

Ի՞նչ կասեր Արման Կիրակոսյանը Էրդողանին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին ժամանակներս թուրք տարբեր պաշտոնյաներ անգամ միջազգային ասյանների հարթակներից չեն թաքցնում, որ հայ-թուրքական առձանագրությունների իրականացման միակ խոչընդոտը Սփյուռքից Հայաստանի կախվածությունն ու Ղարաբաղի «գրավյալ» տարածքները չվերադարձնելն են: Առաջինի դեպքում ենթադրվում է, որ մենք չպետք է այդպես ինտենսիվ ջանքեր գործադրենք Հայոց ցեղասպանության դատը հետաձգելիս: Այդ եւ հարակից հարցերի մասին «Ազգը» զրուցեց ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի հետ:

- Հայաստանը շարունակում է սատարել միջազգային ճանաչումը: Մենք, իհարկե, սպասում ենք, որ այս կամ այն երկիրը կճանաչի, բայց եթե այս օրերին տարբեր երկրներ չեն ճանաչում Հայոց ցեղասպանությունը, դա չի նշանակում, որ չենք աշխատում այս ուղղությամբ: Ես կարող եմ հիշեցնել նախարարության կազմակերպած երեւանյան կոնֆերանսը, որին մասնակցում էին առաջատար մասնագետներ, այսօրվա այս միջոցառումը (զրույցն ընթանում էր «Հայոց ցեղասպանության սկանդինավյան արձագանքը» միջազգային գիտաժողովի ընդմիջմանը) վկայում են, որ Հայաստանը շարունակում է սատարել միջազգային ճանաչման խնդիրը, եւ սա շատ կարեւոր հարց է ու որեւէ առնչություն արձանագրություններին ունենալ չի կարող, քանի որ արձանագրություններում Ցեղասպանության մասին խոսք չկար: Այո , կային երկխոսության վերաբերյալ դրույթներ տարբեր բնագավառներում, բայց դա չի նշանակում, որ ճանաչման պրոցեսը ինչ-որ ձեւով խաթարվելու է դրա հետեւանքով: Որովհետեւ Ցեղասպանության ճանաչումը ոչ միայն համամարդկային բնույթ ունեցող բան է, եւ ընդհանրապես միջազգային գլոբալ համատեքստում ցեղասպանության կանխարգելման, դատապարտման եւ ժխտողականության դեմ պայքարին բոլորը պետք է սատարեն, այլեւ մեր ազգի հիշողության հետ կապված խնդրի հետաքննմանն ուղղված գործողություններին սատարել շարունակելը հայերիս պարտականությունն է:

- Արձանագրություններում միգուցե նախապայման բաց տեքստով չկա (չնայած՝ թաքնված տեքստով ենթադրելի է), բայց թուրք պաշտոնյաներն անընդհատ այդ նախապայմանները բարձրաձայնում են ու դրանք կապում արձանագրություններին՝ որ Սփյուռքից Հայաստանը չվախենա եւ Ղարաբաղի «գրավյալ» տարածքները վերադարձնի: Այդ դեպքում ինքնին ծագում է արձանագրությունները հետ կանչելու գաղափարը:

Տես էջ 3

500 բարձրաստիճան անձինք հրապարակային հայտարարագրեր կներկայացնեն

Մի քանի օրենքներում կառավարության երեկ առաջարկած փոփոխություններով 500 բարձրաստիճան պաշտոնյաներ պետք է ներկայացնեն հրապարակային հայտարարագրեր գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց մասին:

«Սա մեր քաղաքական բարեփոխումների կարեւորագույն օրենսդրական նախաձեռնությունն է, որն առաջին հերթին վերաբերում է մեզ՝ կառավարության անդամներիս: Մենք՝ 500 պաշտոնատար անձինք, պարտավոր ենք լինելու այս օրենքն ընդունվելուց հետո ներկայացնել հրապարակային հայտարարագրեր եւ ենթարկվել հասարակության վերահսկողությանը: Պաշտոնատար անձանց գործունեությունը լինելու է խիստ հրապարակային, թափանցիկ, բնականաբար, նվազելու են կոռուպցիոն ռիսկերը: Դրականը նաեւ այն է, որ հազարավոր հայտարարագրերը, որ լրացնում էինք եւ որոնք վերաբերում էին նաեւ միջին մակարդակի պետական չինովնիկներին, ըստ էության որեւիցե քաղաքական բովանդակություն չունեին», նշեց վարչապետ Տիգրան Սարգսյանը, ավելացնելով, որ քվորումի բացակայության պատճառով այս նախագիծն Ազգային ժողովի կողմից չի ընդունվել: Սակայն նա վստահություն հայտնեց, որ պատգամավորները կաջակցեն այս բարեփոխումը իրականացնելուն:

Ա. Մ.

Համատարած կաշառակերություն է նոտարիատի ոլորտում

Հայտարարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը

Առաջարկվում է վերացնել ամուսնության պետական գրանցման ոլորտում տարածքային սահմանափակումը՝ թույլ տալով նաեւ շրջանների բնակիչներին ամուսնության պետական գրանցում կատարել Երեւանի ՔԿԱԳ գործակալության «Ամուսնության պալատ» տարածքային բաժնում: Խոսելով կառավարության երեկ ընդունած այս որոշման մասին, վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձավ նաեւ վերջին շաբաթներին պետության կողմից մատուցվող ծառայությունների՝ վարորդական իրավունքների տրամադրման, մեքենաների գրանցման, հաշվառման, տեխնիկական զննման վերաբերյալ ընդունված որոշումներին: Ըստ նրա, տեխզննման ծառայությունից տարեկան օգտվում է 300 հազար քաղաքացի, վարորդական իրավունք է ստանում առնվազն 50 հազար քաղաքացի, մեքենաների հաշվառման գործառույթում է ներգրավվում տարեկան 170 հազար քաղաքացի: «Հասկանալի է, որ եթե այս բնագավառում մեր կողմից մատուցվող ծառայություններն անորակ լինեն եւ կոռուպցիոն ռիսկեր պարունակեն, մեր նկատմամբ վստահություն չի լինի», ասաց նա: Նույն խնդիրն առկա է նաեւ նոտարական ծառայությունների ոլորտում, եւ որի առնչությամբ կառավարությունը հավանության է արժանացրել «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխությունները:

«Սա այն ոլորտն է, որտեղ նույնպես իրականացվել է մոնիտորինգ: Համատարած կաշառակերություն է գործառույթների կիրառման առումով, ընդ որում քաղաքացիներին տեղյակ չեն պահում, թե իրականում ինչ վճարներ պետք է իրականացնի, միանգամից գումարը վերցնում են: Պարզվում է, որ այդ գումարը 2-3 անգամ գերազանցում է սահմանված սակագները: Պետք է նաեւ այդ խնդրին անդրադառնալ: Սահմանել ենք որոշակի միջանցք, ասենք, ծառայությունն արժե 3000-5000 դրամ: Համատարած 5000 դրամ են վերցնում, չկա որեւիցե մեկը, որ ասենք, 3000 դրամով այդ ծառայությունը մատուցի: Հետեւաբար պետք է անդրադառնանք սակագներին եւ վերանայենք դրանք, ուղղակի վերացնենք այդ սանդղակը», նշեց Տիգրան Սարգսյանը:

Ա. Մ.

7800 թուրքական ստորագրություն ընդդեմ «Աղետ»-ի

Ապրիլի 20-ին, ժամը 20.15-ին ֆրանս-գերմանական arte հեռուստալիքը եթեր հեռարձակեց Էրիկ Ֆրիիդլերի «Աղետ. մի ցեղասպանություն» վավերագրական ֆիլմը, որի մասին բազմիցս գրել ենք մեր թերթի էջերում: Ֆիլմը ցուցադրելու է նաեւ գերմանական Phoenix-ը ապրիլի 23-ին, ժամը 22.30-ին: Ի դեպ, Հայոց ցեղասպանության մասին արդեն 3 մրցանակ շահած «Աղետը» Phoenix-ը ցուցադրել էր նաեւ անցյալ տարի՝ հաջորդելով 2010-ի ապրիլի 9-ին ARD-ի անդրանիկ ցուցադրմանը: Ֆիլմից հետո Phoenix-ը բանավեճ էր կազմակերպել՝ հրավիրելով թուրք, հայ, գերմանացի բանախոսների: (Սրա մասին մանրամասն իրազեկել ենք ժամանակին «Ազգում»-ում. Հ.): Ֆիլմի հեռարձակումը գերմանաբնակ թուրքերի բողոքն էր հարուցել, որ, պարզվում է, չի մարում, այլ ակտիվանում է՝ ֆիլմի հաջողություններին զուգահեռ:

Ինչպես ապրիլի 21-ին տեղեկացնում է գերմանալեզու Turkishpress կայքը, երկուշաբթի՝ ապրիլի 18-ին Հյուսիս-Հռենոս-Վեստֆալիա երկրամասի թուրքերը՝ գլխավորությամբ թուրք-գերմանական կրթական միության նախագահ Ալի Սոյլեմեցօղլիի, հանդիպել են երկրամասային ղեկավարությանը եւ նրանց հանձնել «1915-ի հայկական պնդումների» դեմ 7800 ստորագրություն ներկայացնող արձանագրությունը: Հիշյալ միության նախագահն ասել է, թե ֆիլմի ապատեղեկատվության փոխարեն ինքը կամենում է երկրամասի դպրոցներում բացատրել իրական եղելությունը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Թամարա Պողոսյանը հրաժարական կտա

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն **Թամարա Պողոսյանը** հրաժարականի դիմում է տալու: Այս մասին «**Ազգին**» տեղեկացրեց անձամբ Թամարա Պողոսյանը: Հիմա նա զբաղված է հրաժարականի փաստաթղթերը պատրաստելով:

Հիշեցնենք, որ վերջերս Թամարա Պողոսյանը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանին** մեղադրել էր «փողերի լվացման» մեջ: Սփյուռքի նախարարությունն էլ իր հերթին փոխադարձ մեղադրանքներով պատասխանել էր Թամարա Պողոսյանին:

Երեկ Թ. Պողոսյանը տեղեկացրեց, որ հիմնադրամի աշխատակիցներն աշխատանքից հեռանալու իրենց դիմումներն արդեն գրել են, որոնց մի մասը հիմնադրամի տնօրենը մակագրել է: «Ինձ հետ միասին բոլորն էլ դուրս են գալու», ավելացրեց Թամարա Պողոսյանը:

Ի. Պ.

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Ապրիլ 24-յան խորհրդով՝

1915-ին հայերի դեմ գործած թուրքական իշխանությունների ոճրագործությունը գենոցիդ բնորոշած առաջին իրավագետը՝ Արմին Թեոֆիլ Վեգներ՝ Ալբերտ Մուշեղյանի հրապարակումը:

Դեր-Զորում հայերի վայրագ խոշտանգումների մասին արաբերեն նոր վկայություն՝ Գեւորգ Յազըճյանի ներկայացմամբ եւ թարգմանությամբ, նույն հեղինակի գրախոսությունը՝ Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» գրքի առիթով:

1915-ի նահատակ զոհերի հիշատակի աշխարհասփյուռ կոթողները մեկ ալբոմում. տպավորություն-անդրադարձ:

Հայ ժողովրդի պատմական ու ներկայի ընթացքներում-Հակոբ Հակոբյանի մտորումների շարքից. «Ավարտի սկիզբը»:

Վարդան Դեւրիկյան. «Անդաստանի ժողովրդադավան ու եկեղեցական արարողությունը»:

Եվ մեկ հրապարակում՝ Բարսեղ Կանաչյանի մասին Գեւորգ Գանդահարյանի 1968 թ.-ի ելույթը

Մ. Ք.

Ստամբուլում հարգանքի տուրք ցեղասպանության զոհերի հիշատակին

Մարդու իրավունքների միությունը կոչ է անում բոլորին ապրիլի 24-ին հավաքվել «Սուլթանահմեդ» հրապարակում

Հ. ՉԱՔԲՅԱՆ

«Ազգի» էջերում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին անդրադառնալիս բազմիցս նշել ենք, որ դրա ծավալումը հանգեցնում է թուրքական ժխտողականության դիրքերի սպառմանը: Թեեւ դրան զուգընթաց ժխտողականությունը, հակառակ ենթադրություններին, հետզհետե մարտնչող է դառնում, սակայն դա միաժամանակ Հայոց ցեղասպանության հարցի վերարծարծման նախադրյալներ է ստեղծում երկրում, դրա հետ արթնանում է մարդկային խիղճը ազնիվ թուրք մտավորականների շրջանում, իսկ մարդասիրական կազմակերպություններն ընդվզում են ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության դեմ:

Ազնիվ թուրք մտավորականներից Թուրքիայում ցեղասպանության հարցի արծարծման առումով պետք է առանձնացնել հրատարակիչ Ռագըփ Զարաֆոլուին եւ նրա հանգուցյալ տիկնոջ Այշե Նուր Զարաֆոլուին: Կազմակերպություններից թերեւս հանդուգն ելույթներով առանձնանում է Մարդու իրավունքների միությունը, հատկապես այդ միության Ստամբուլի մասնաճյուղը: Բացի հեղինակած աշխատություններից, Ռագըփ Զարաֆոլուն թարգմանաբար հրատարակել է Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց թվում Վահագն Տատրյանի երկու աշխատությունն ու ստվարածավալ երեք ժողովածուները:

Հանգուցյալ Այշե Նուր Զարաֆոլուն անտեսելով իր առողջական վիճակի օրեցօր վատթարացումը, թարգմանել եւ հրատարակել է Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը, նախապես իմանալով, որ բանտարկությունն անխուսափելի է: Երբ նա մահացավ 2002-ի հունվարի 28-ին, հազիվ էր ազատվել երկու տարվա բանտարկությունից: Ռագըփ եւ Այշե Նուր Զարաֆոլուները ոչ միայն նպաստել են Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի հրապարակավ արծարծմանը, այլեւ իրենց հրատարակություններով հարցին նվիրված աշխատություններ հրատարակելու ճանապարհ են հարթել այլ հրատարակիչների համար:

Տես էջ 5

Սեփական հանցագործությունները ծածկելու համար ուրիշների վրա մեղքը գցելը սովորական է Ադրբեջանի համար

«Իննամյա երեխայի ողբերգական սպանության տեղեկության շրջանառությունն ադրբեջանական իշխանությունների կողմից այլ բան չէ, քան փորձ՝ փրկելու Ադրբեջանի արատավորված հեղինակությունն այն բանից հետո, երբ մարտին Սոչիում կայանալիք Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման նախօրեին ադրբեջանական դիպուկահարի կրակոցից սպանվեց հայ զինվոր»: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ Հայաստանի անունից ներկայացված նամակում նշվում է, որ այդ հիմնազուրկ մեղադրանքը փաստացի շեղում է միջազգային հանրության ուշադրությունը:

«Ադրբեջանական աղաստեղեկատվության գրչակները պետք է հասկանան, որ այսպիսի էժանագին քայլերը ոչ միայն համոզիչ չեն, այլեւ ամոթալի են, քանի որ երեխայի կյանքն օգտագործվում է որպես պրոպագանդայի գործիք», նշված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված ապրիլի իննով թվագրված եւ տասներեքին որպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի փաստաթուղթ շրջանառության մեջ դրված նամակում՝ ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ **Կարեն Նազարյանից:**

Նամակը ներկայացվում է որպես Անվտանգության խորհրդի վաթսունվեցերորդ նստաշրջանի օրակարգի 34 («ՎՈՒԱՄ տարածքում ձգձգված հակամարտություններին ու դրանց հետեւանքները միջազգային խաղաղության, անվտանգության ու զարգացման համար»), 39 («Իրավիճակը Ադրբեջանի օկուպացված տարածքներում»), 66 («Ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության ու անհանդուրժողականության այլ դրսեւորումների վերացումը») եւ 75 («Պետությունների պատասխանատվությունը միջազգայնորեն ոչ իրավաչափ գործողությունների համար») կետերի առնչությամբ ու հասցեագրված է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Ըստ նամակի, վերջին շրջանում շփման գծի երկայնքով Ադրբեջանի կողմից զինադադարի խախտումների աննախադեպ ավելացումը «որպես հիշեցնում է ծառայում այն բանի, որ Ադրբեջանը չի կատարում 2011թ. մարտի հինգին Սոչիում եռակողմ հանդիպման համաձայնագիրը»: Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորումը հաշվի առնելու փոխարեն Ադրբեջանն, ըստ Կարեն Նազարյանի, շարունակում է մեծացնել լարվածությունն ու խոչընդոտել խաղաղ գործընթացին:

ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցիչը գլխավոր քարտուղարի ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքին, որ ադրբեջանական կողմը անամոթաբար փորձում է շեղել միջազգային հանրության ուշադրությունը իրականությունից՝ ուրիշների վրա գցելով իր իսկ ռազմական գործողությունների ու հրադադարի խախտումների պատասխանատվությունը: «Սեփական հանցագործությունները ծածկելու համար ուրիշների վրա մեղքը գցելու պրակտիկան սովորական է դարձել Ադրբեջանի համար»:

Նամակում նշվում է նաեւ շփման գծի միջադեպերի հետաքննության ԵԱՀԿ առաքելության աշխատանքների մասին, որոնց ԼՂ կողմից ԵԱՀԿ առաքելության ներկայացուցիչներին ցուցաբերված աջակցության կողքին Ադրբեջանը դիտարկման հնարավորություն չի տվել: «Ավելի վատթարացնելով իրավիճակը՝ մարտի 10-ի դիտարկման ժամանակ Ադրբեջանը խախտեց հրադադարը եւս մեկ անգամ շփման գծի մի քանի հատվածներում՝ հանգեցնելով ԼՂՀ պաշտպանության բանակի տասնիննամյա զինվորականի մահվան»:

Նամակում հիշատակվում են մարտին տեղի ունեցած բոլոր նենգ խախտումների միջադեպերը, նշելով, որ այդ փաստերը ցույց են տալիս, որ Ադրբեջանը շարունակում է խախտել Սոչիի՝ վստահության հաստատանն ուղղված մեխանիզմների ստեղծման եռակողմ համաձայնագիրը՝ սադրիչ գործողություններով խաթարելով խաղաղ գործընթացը:

Նամակին կցված է նաեւ հավելված՝ այս տարվա մարտի մեկից ապրիլի մեկը Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների մասին. մեկ ամսում զինադադարը խախտվել է 107 անգամ՝ մոտ 1407 կրակոցով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վարչության

Հանրադյունահանողները կազատվեն իրավական խնդիրներից

Իսկ համայնքների բյուջեներ մտնող գումարները կտրուկ կավելանան

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տարիներ շարունակ հանրեր շահագործող կազմակերպությունները իրավական խնդիրներ էին ունենում այս ոլորտին առնչվող երեք օրենքներում եղած հակասությունների պատճառով: Խոսքը հողերի նշանակության մասին է, որի վերաբերյալ կառավարությունն երեկ ընդունած որոշումը նպատակ ունի վերացնել ստեղծված իրավիճակը: Ի՞նչն էր խնդիրը եւ ինչպե՞ս է կարգավորվելու այսուհետեւ:

Ինչպես արդեն նշեցինք, «Ընդերքի մասին» եւ «Կոնցեսիաների մասին» օրենքները հակասության մեջ էին մտնում Հողային օրենսգրքի հետ: Մասնավորապես, հանքեր շահագործողները առաջին երկու օրենքներով իրենց գործունեության մեջ ոչ մի խախտում թույլ չեն տալիս, բայց Հողային օրենսգրքով հայտնվում են անօրինական վիճակում, քանի որ, ըստ վերջինիս, հողի նշանակությանը չհամապատասխանող՝ այլ նպատակային օգտագործումը արգելվում է:

Մինչդեռ Հայաստանում մոտ 480 հանքեր շահագործողների կողմից օգտագործվող հողերի մեծ մասը (մոտ 70 տոկոսը) ոչ թե արդյունաբերական, արտադրական կամ ընդերքօգտագործման, այլ գյուղատնտեսական նշանակության են: Սա մշտապես վեճերի առիթ էր ստեղծում համայնքների, որոնց պատկանում են այդ հողերը, եւ հանքարդյունահանողների միջեւ, առաջացնում կոռուպցիոն ռիսկեր, ավելորդ բաբաշուկներ:

Տես էջ 6

«Հրապարակը» կրկին կհայտնվի դատարանում

«Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյանի** աշխատանքային առավոտը սկսվել է ծեծկռտուքով: «4 հոգով էին՝ մի տղամարդ, 3 կին, այդ թվում նաեւ «Մառոզը»՝ Մարգարիտա Խաչատրյանը: Մտան ներս, սկսեցին գոռալ, սեռական բնույթի հայհոյանքներ հղել», միջադեպն է նկարագրում Օհանյանը:

«Մառոզը» «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդի նախագահ, շատերի կողմից հարգված **Մարգարիտա Խաչատրյանն** է:

Ծեծկռտուքի պատճառը «Հրապարակ»-ի առաջին էջում տպագրված «Ծեծկռտո՞ւք է եղել» հոդվածն է, որտեղ լրագրողն անդրադարձել է Խաչատրյանի վարքագծին՝ ընդգծելով, որ նա աչքի է ընկնում կոպիտ վարքագծով՝ զորամասերում թերություններ, խախտումներ հայտնաբերելիս զերծ չի մնում հայհոյանքներից:

Թերթի տեղեկություններով՝ վերջին այցերից մեկի ժամանակ ԼՂՀ զորամասերից մեկում վիճաբանություն է սկսվել Խաչատրյանի եւ հրամանատարական կազմի միջեւ, եւ բանը հասել է նույնիսկ քաշքշոցի եւ ծեծի: Հոդվածում լրագրողը զրուցել է նաեւ Խաչատրյանի հետ, որը հերքել է այդ տեղեկատվությունը:

Արմինե Օհանյանի փոխանցմամբ՝ Խաչատրյանը հայհոյել է, վնասել խմբագրության գույքը՝ պատռել թերթերը, ջարդել բաժակները՝ անընդհատ կրկնելով, թե «սատկացնելու եմ, ոչնչացնելու եմ, այստեղից կենդանի դուրս չեք գալու, ձեր մայրերը թող ձեզ տեսնեն դագաղի մեջ»: Խաչատրյանը ճանկռել է Օհանյանի ձեռքը:

Մինչ իրավապահ մարմինների ժամանումը խումբը հեռացել է. սակայն Օհանյանը հանցագործության մասին հաղորդագրություն է տվել ոստիկանությանը. նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Մարգարիտա Խաչատրյանի մեկնաբանությամբ էլ առավոտյան հրամանատարները են իրեն զանգել ու ասել, որ «Հրապարակ»-ում ձեր պահվածքի մասին հոդված կա: «Նախապես ճշտեցի, թե քանիսից է խմբագրությունն աշխատում, գնացի՝ ողջ խումբն այնտեղ էր: Մոտեցա, ասացի, որ տպած նյութի հետ կապված պահանջում եմ կամ հերքում, կամ հիմնավորում, քանզի չեմ եղել ԼՂՀ ՊԲ-ում: Սակայն խմբագիրն ասաց, որ ինձ լավ է ճանաչում, թե սեւ շորերս դարձրել եմ շահարկման առարկա, ու զոհված տղայիս դարձրել եմ ինձ համար բիզնես: Եթե որեւէ մեկն ինձ կանգնի ասի, որ ես իմ որդուն դարձրել եմ բիզնես, կոկորդը կկրծեմ՝ ցանկացածի, ով իմ տղու անունը կտա» ասում է Խաչատրյանը:

Նրա ներկայացմամբ՝ Օհանյանն է իրեն դրդել կոպտության: «Մենք 4 հոգով գնացել էինք խմբագրություն հերքում պահանջելու նպատակով: Որեւէ մեկը մտադրություն չուներ խմբագրության գույքը ջարդել կամ հայհոյել», ասաց նա՝ հավելելով, որ պատրաստվում է քաղաքացիական հայցով դիմել դատարան:

Միջադեպին երեկ անդրադարձել է նաեւ ՊՆ խոսնակ **Դավիթ Կարապետյանը՝** հերքելով «Հրապարակ»-ում հրատարակված լրատվությունը, թե ԼՂՀ ՊԲ զորամասերից մեկում վիճաբանություն է տեղի ունեցել:

Հ. Հ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳԻ ՅԱՐԱՅԱՆԻ

Բազմատաղանդ երգիծանկարիչը



Վաստակավոր նկարիչ Յարալյան Գեորգի Յակովի (ծնվել է 13.11.1927թ., Գանձակում): 1930 թ. տեղափոխվել է Թբիլիսի: Ավարտել է ԵԳԹ-ն (Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտ) (1953թ.):

Ուշագրավ են նրա դիպլոմային 3 աշխատանքները «Ոչ պատերազմ հրահրողներին», «Զգոն եղիր» եւ «Առնետի մի պատմություն»:

2009-ին Գ. Յարալյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր նկարիչ կոչումը: 1958-ից ՀՀ նկարիչների միության անդամ է:

Հեղինակ է պլակատների («Չիլի», 1983թ., «Կրծողի էվոլյուցիան», 1986թ.) երգիծանկարների («Վերնիսաժ», 1975), նաեւ նույնանուն անտիպ գիրքը, 1996, «Համերգն սկսվեց», 1986, երգիծական ալբոմ, մանկական գրքերի պատկերազարդումների («Մանկական հանելուկներ», 1986, «Գտիր ինքդ» 1987), ջրաներկ բնանկարների («Ծովանկար», 1985, «Ծաղկաձորն աշնանը», 1991): Ձեւավորել եւ պատկերազարդել է շուրջ 450 երգիծական գրքեր («Ժողովրդական սրախոսություններ», 1992, «Գյումրվա անեկդոտներ», 1993, «Եզոպոսի առակները», 1994 եւ այլն): 1954-ից մասնակցում է հանրապետական եւ արտասահմանյան ցուցահանդեսների, ծաղրանկարներով հանդես է գալիս մամուլի էջերում (առավել՝ «Ոգնի», «Ազգ», «Երեւան», ինչպես նաեւ «Կրակադիլ» (Մոսկվա), «Քաջ նազար» (Լոս Անջելես) եւ վերջին 14 տարիների աշխատել է «Ազգ» օրաթերթում:

«Վիետնամից տեղում բյուրով մարտ» եւ «Խաղաղություն» երգիծանկարների համար «Երգիծանքը հանուն խաղաղության պայքարում» ցուցահանդեսում պարգեւատրվել է «Երգիծանք-69» մեդալով (Մոսկվա, 1969): Յարալյանի արվեստին (ջրաներկով, տուշով, գուաշով կատարված գործեր) բնորոշ են հեղինակի սուր դիտողականությունը, երգիծանքով ընդհանրացված պատկերումը, քաղաքացիական դիրքորոշումը:

Անհատական ցուցահանդես է ունեցել 1978-ին Երեւանում: 2004թ. անհատական ցուցահանդես է ունեցել Դանիայում:

Լինելով «Երգիծաբանների ասոցիացիայի» պատվավոր անդամ, բազմիցս մասնակցել է երգիծանկարների ցուցահանդեսի: Դրանցից վերջինը, որին Գեորգի Յարալյանը ներկայացրել էր մեկ տասնյակ երգիծանկարներ, նվիրված էր «Ծիծաղի օրվան»:

Նրա աշխատանքներից շատերը պահպանվում են Ազգային պատկերասրահում եւ այլ թանգարաններում, անհատական հավաքածուներում:

Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ Գեորգի Յարալյանի հուղարկավորության համար ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի գլխավորությամբ:

Անվանի երգիծանկարչին վերջին հրաժեշտը տեղի կունենա այսօր, ապրիլի 22-ին, Հայաստանի նկարիչների միության շենքում, ժամը 12.00-14.00: Այնուհետեւ հուղարկավորությունը՝ Քաղաքային պանթեոնում:

Ցավակցություն

Հայաստանի Թեթեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը խոր վշտով ցավակցում է ՀՀ ժողովրդական նկարիչ, «**Ազգ**» օրաթերթի ծաղրանկարիչ **Գեորգի Յարալյանի** հարազատներին, մտերիմներին, գործընկերներին նրա մահվան կապակցությամբ:

Նրա ծաղրանկարները շուրջ 15 տարի անընդմեջ տպագրվել են «**Ազգ**» օրաթերթում, հանրապետության բազմաթիվ թերթերում եւ ամսագրերում:

Գեորգի Յարալյանի հիշատակը վառ կմնա մեր սրտերում:

Հայաստանի Թեթեյան մշակութային միության կենտրոնական վարչություն

Չհավաքել ու չգնել սունկ պատահական վայրերից

Այս տարվա առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բոտուլիզմի 11 դեպք: Առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ ու հակահամաճարակային տեսչության սնուցման ու սննդամթերքի անվտանգության բաժնի պետ Մարգարիտա Բաբայանն «Արմենպրեսին» փոխանցել է, որ արձանագրված դեպքերի մեջ կան նաեւ մահվան ելքեր. բոտուլիզմից մահացել են Տավուշի ու Լոռու մարզերի 2 բնակիչներ: Մարգարիտա Բաբայանն ասել է, որ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բոտուլիզմի դեպքերը չեն ավելացել. «Մենք շարունակում ենք պահածոների պատրաստման վերաբերյալ քարոզչական աշխատանքներ իրականացնել՝ բնակիչներին տեղեկացնելով, թե սննդի որ տեսակները կարելի է պահածոյացնել»:

Անդրադառնալով սնկից թունավորումներին՝ առողջապահության ոլորտի աշխատակիցը նշել է, որ սունկ հավաքելու շրջանը նոր է սկսվում. «Սակայն մենք բնակիչներին զգուշացնում ենք, որ սունկ չհավաքեն, նաեւ խորհուրդ տալիս, որ սունկ չգնեն պատահական վայրերից»:

Ի.Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ եղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Շախմատ խաղալուց չպետք է մոռանալ, թե ո՞վ է շախմատի ֆեդերացիայի նախագահը»

Դասաիրավական բարեփոխումների վերաբերյալ նախագահական նստավայրի վերջին խորհրդակցությունում նախագահ **Սերժ Սարգսյանի** ասածները ընդդիմության կոնգրեսական շրջանակներին ոգեւորել են այնման, որ ՀԱԿ-ն, ըստ **Լեւոն Զուրաբյանի**, կասարված է համարում իր առաջնային պահանջներից մեկը՝ մարտի 1-ի բացահայտման ուղղությամբ նախագահի ասածը նկատի առնելով: ՀԱԿ-ից ոմանք անգամ վստահ են, որ մինչեւ ապրիլի 28-ը իրենց երեք պահանջն էլ կկատարվի՝ մարտի 1-ի հետ կապված բոլոր բանտարկյալներն ազատ կարձակվեն, մարտի 1-ի գործով նախաքննությունը նորից կակտիվանա, Ազատության հրապարակն էլ կդառնա ընդդիմության մտքի գոհարների արտահայտման մշտական վայր. այդ դեպքում, ուրեմն, ապրիլի 28-ը կդառնա երկխոսության սկզբնավորման օր:

Սերժ Սարգսյանը, փաստորեն, անակնկալ է մատուցել բոլորին՝ ե՛ւ ընդդիմադիրներին, ե՛ւ իշխանական քաղաքական դաշտին, քանի որ վերջինս անակնկալից դեռ ուշի չի եկել եւ համարժեք մեկնաբանություններ դեռ չի տալիս նախագահի ասածին: Սակայն նախագահ Սարգսյանի գործունեության կորին հետեւողները, հատկապես քննական հայացքի տեր մարդիկ հազիվ թե անակնկալի են եկել, քանի որ մի շարք կազուսային պահերի նա երկխոսության դուռը միշտ բաց է թողել: Անգամ 2008 թվականի փետրվարին, նախագահական ընտրություններից մեկ օր առաջ, երբ Հանրաքվեության հրապարակում իշխանամետներն էին միտինգ անում, իսկ Ազատության հրապարակում ընդդիմադիրները, եւ անգգույշ ասված խոսքը կարող էր ընդհարման տանել թեւերի կողմնակիցներին, Սարգսյանն իրեն զուսպ պահեց եւ չփակեց երկխոսության ճամփան եւ հետո էլ բազմիցս այդպես է վարվել: Այնպես որ եթե լավ նայենք՝ նախագահականում մեկ օր առաջ ասվածներն ամենեւին էլ անակնկալ չէին եւ երրորդ նախագահի կերպարի մեջ տեղավորվում են. «Բազմիցս ասել եմ եւ հիմա էլ կրկնում եմ, որ սպասելիքները շատ են եւ, առաջին հերթին, խոսքս վերաբերում է մարտի մեկի դեպքերին: Ակնկալում եմ նոր թափ եւ ընդգծված ակտիվացում՝ նշված դեպքերի բացահայտման հարցում: Ես գիտեմ բոլոր խնդիրներն ու օբյեկտիվ պրոբլեմները, որ ունեցել ենք մենք բոլորս, նկատի ունեմ՝ իրավապահ մարմինները: Երեւի ինձնից լավ որեւէ մեկը տեղյակ չէ այդ պրոբլեմներին: Բայց պետք է մեկ անգամ եւս շեշտեմ, որ հարցի նշանակությունը չափազանց մեծ է ե՛ւ մեր պետության, ե՛ւ մեր հասարակության, ե՛ւ նաեւ տարբեր շահարկումներից խուսափելու համար: Սա էլ է էական հանգամանք: Անձնապես ինձ համար սա շատ կարեւոր հարց է, եւ ձեզ ուղղված իմ պահանջն է՝ կրկին եւ առավել մանրակրկիտ անդրադառնալ նույնիսկ այն հանգամանքներին, որտեղ ըստ ձեզ որեւէ նոր բան չի կարող լինել: Փորձեք այդ դեպքերի բացահայտման նոր ուղիներ գտնել: Արդեն տեւական ժամանակ է անցել, միգուցե մարդիկ կան, ովքեր ականատես են եղել եւ այն ժամանակ չէին ուզում համագործակցել իրավապահ մարմինների հետ, իսկ հիմա այլ մոտեցումներ ունեն: Սա էլ է շատ հնարավոր», ասել էր նախագահը:

Հետաքրքրական է, որ երեկ հաղորդագրություն տարածած հատուկ քննչական ծառայությունը հայտնում էր, թե մարտի 1-2-ին Երեւան քաղաքում զանգվածային անկարգությունների ընթացքում կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է: Եվ դեռ հիշեցրել է իր հեռախոսահամարը՝ 511-612, որպեսզի նոր տեղեկություններ տրամադրելու մտադրություն ունեցողները զանգահարեն: Սա, փաստորեն, նախագահի ասածին հատուկ քննչական ծառայության հրատապ արձագանքն է:

Օպերատիվ արձագանքի առումով երեկ աչքի ընկավ նաեւ ԱԺ փոխնախագահ, ավելի վաղ մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նախագահ **Սամվել Նիկոյանը**, որ իր տարածած հայտարարության մեջ հարկ է համարել շեշտել, թե մարտի մեկի դեպքերի քննությունն այս ընթացքում չի դադարել եւ շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում: Երեք տարի շարունակ թե՛ քննությունը, թե՛ արդարադատության համակարգի ցավոտ հարցերը եղել եւ մնում են ՀՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում. «ՀԱԿ առաջնորդի արտահայտած այն միտքը, թե քիգ-բոքսինգի փոխարեն պետք է շախմատ խաղալ, մենք ընկալում ենք որպես նախագահի կողմից բազմիցս հնչեցրած քաղաքակիրթ երկխոսության կոչերի ընդունում: Սա, իհարկե, դրական է: Կարծում եմ՝ քաղաքական գործընթացները կշարունակեն դրական հունով ընթանալ, քանի որ գիտեմ, որ շախմատ խաղալուց չպետք է մոռանալ, թե ով է ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահը, եւ ում կողքին են Հայաստանի լավագույն շախմատիստները»: Երեկ հնչեցին նախագահ Սարգսյանի հանձնարարականի առաջին զգույշ գնահատականները, զգույշ, քանի որ ակնհայտ է՝ սա քաղաքական իրողությունները 180 աստիճանով շուռ տալու նախադուռ է կարծես, իհարկե՝ ոչ բոլորի համար հաճելի, անգամ՝ սովորույթի պատնեշները դժվար հաղթահարող. ակնհայտ է, որ խաղի կանոններ ու խաղի մասնակիցներ են փոխվում, չնայած դեռ հասկանալի չէ՝ արդարացվա՞ծ արդյոք:

Որ իշխանությունն ու ընդդիմությունը համագործակցեն՝ դրա մեջ վատ բան չէր տեսել ՀՀԿ-ական **Մանվել Բաղեյանը**, իսկ արտահին սպառնալիքի առումով ընդդիմությունը նրա կարծիքով նույնքան պատասխանատվություն պետք է զգա, որքան իշխանությունը: Իշխանական կոալիցիայի մեկ այլ պատգամավոր՝ **Նաիրա Զոհրաբյանը** նույնպես երեկ համարում էր, որ միայն համագործակցությամբ կարելի է Հայաստանի առջեւ ծառացած խնդիրները լուծել, եւ սուր անկյունների հարթեցման համար երկրում հարգանքի մթնոլորտը միակ միջոցն է: Դաշնակցական **Ռուզան Առաքելյանը** երկխոսության մի ձեւ է ընդունում, եթե այն Հայաստանի զարգացմանն է ուղղված, իսկ իշխանություն-ընդդիմություն երկխոսությունը, ըստ նրա, դեռ կայացած չէ:

Սակայն արդեն կան քաղաքական շրջանակը ներկայացնող մարդիկ, որոնք խոսում են այն մասին, որ սա գործարք է՝ մյուս ընդդիմադիր մրցակիցներին խաղից դուրս թողնելու համար: Համենայն դեպս «Ժառանգության» **Արմեն Մարտիրոսյանի** խոսքից երեւում էր, որ «Ժառանգության» եւ իշխանության մեջ ոչ մի երկխոսություն էլ չկա, այլապես կընդունվեին ե՛ւ արտահին հարցերի, ե՛ւ ընտրական օրենսգրքի շուրջ նրանց հակափաստարկները:

Այսպես թե այնպես՝ նախագահ Սարգսյանը այս էլ քանիերորդ անգամ լարն իր ձեռքում պահեց եւ քաղաքական դաշտի հերթական գործընթացը սկզբնավորեց, անկախ նրանից՝ բացասակա՞ն , թե դրական զարգացում կհետեւի:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Բարոնուհի Քոքսը՝ Ղարաբաղի եւ ցեղասպանության ճանաչման մասին

«Ինչպիսի՞ ուղիներ է տեսնում ԼՂ հիմնախնդրի լուծման համար» հարցին ի պատասխան՝ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խորհրդարանի Բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խմբի նախագահ բարոնուհի **Քերոլայն Քոքսը** երեկ Ազգային ժողովում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նշեց. «Մենք այնտեղ ականատես եղանք, թե Մինսկի խմբի ձեւաչափով բանակցային գործընթացում ինչ առաջընթաց է եղել: Ես կարծում եմ, որ ԼՂ ժողովուրդը պետք է իրավունք ունենա մասնակցելու բանակցային գործընթացին: Ես տեսնում եմ, որ Հայաստանը, հայերը կամք են ցուցաբերել շարժվել այդ սկզբունքների հիման վրա, ու հիմա ադրբեջանցիներն էլ պետք է համագործակցեն»:

Նրա հետ ասուլիսին մասնակցող Համայնքների պալատի անդամ **Զոն Ուիթինգդեյլն** իր հերթին խոսացավ Բրիտանիա վերադառնալուն պես Լորդերի պալատի Համայնքների պալատին ներկայացնել այն ամենը, ինչին ականատես է եղել Ղարաբաղում, քանի որ թյուր տեղեկություններ կան այդ ամենի վերաբերյալ: Իսկ բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խմբի անդամները հավաստիացրին, որ ամեն ինչ կանեն, որպեսզի Բրիտանիայում մարդիկ իմանան Հայոց ցեղասպանության մասին: «Մենք այցելեցինք Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ տեսանք կատարվածի բոլոր աղցույցները: Վերադառնալով Մեծ Բրիտանիա՝ ես կպատմեմ այն ամենը, ինչ տեսա», նշեց Զոն Ուիթինգդեյլը: Նա տեղեկացրեց նաեւ, որ մտադիր է ցուցահանդես կազմակերպել բրիտանական խորհրդարանում՝ իրազեկելու համար իր գործընկերներին Հայոց ցեղասպանության մասին:

Բարոնուհի Քերոլայն Քոքսի կարծիքով՝ ցավալի է, որ Թուրքիան մինչ օրս ժխտում է Հայոց ցեղասպանությունը: Ըստ նրա՝ ցեղասպանությունը, որը ժխտվում է եւ չի ճանաչվում, հող է նախապատրաստում նոր ցեղասպանությունների համար: Բարոնուհու գնահատմամբ՝ ցեղասպանության ճանաչումն ու ընդունումը բխում է արդարության ու մարդու իրավունքների սկզբունքներից. «Ես, հայ չլինելով, ցանկանում եմ ասել, որ Հայոց ցեղասպանության վերքերը չեն սպիանա, եթե այն չընդունվի», ասաց Քերոլայն Քոքսը: Այս մասին հայտնում է ԱԺ մամուլի ծառայությունը:

Մ. Խ.

Ի՞նչ կասեր Արման Կիրակոսյանը Էրդողանին

1-ին էջից

- Նախ պետք է ասեմ, որ երբ թուրք նախագահը եկավ Հայաստան եւ սկսվեց գործընթացը, որեւէ նախապայմանի մասին խոսք չի գնացել: Բայց իրենք են ասում, որ դիվանագիտական փուլը մեկ բան է, քաղաքական փուլը՝ մեկ բան: Դիվանագիտական փուլը նրանց տեսակետով ներառում է պետությունների ղեկավարների բարի ցանկությունները՝ գործընթացն սկսելու: Քաղաքական փուլ է, երբ միանում են այլ քաղաքական ուժեր, միանում է խորհրդարանը, տարբեր կուսակցություններ: Ադրբեջանի իշխանությունն էլ մյուս կողմից է ձնշում լոբբիստական շրջանակների միջոցով՝ դժվարացնելով պրոցեսը: Սա էր իրենց տեսակետը: Երբ որ ստորագրվեցին փաստաթղթերը, պարզ դարձավ, որ կրկին ե՛ւ մամուլով, ե՛ւ պետական գործիչների մակարդակով Թուրքիայում հնչեցին նույն նախապայմանները, որոնք հնչում էին անկախության օրվանից սկսած: Բայց մեր դիրքորոշումը՝ առանց նախապայմանների հարաբերության հաստատումը, մնում է անփոփոխ, ինչը նշանակում է, որ Ցեղասպանության ճանաչման գործընթացը չի կարող լինել նախապայման, եւ ղարաբաղյան գործընթացը հայ-թուրքական հարաբերությունների հետ կապելն էլ նույնպես որեւէ առնչություն չունի: Դա նույնն է, ինչ որ մենք ասենք, որ եթե Թուրքիան չլուծի Կիպրոսի խնդիրը, մենք Թուրքիայի հետ սահման չենք բացելու:

- Ցեղասպանության ճանաչման խնդրում պետությունը նոր մարտավարություն, նոր որակի քայլեր որդեգրելո՞ւ է:

- Մենք ունենք երկու հիմնարար փաստաթուղթ՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման հետ: Մեկը 1988 թվականի Գերագույն խորհրդի որոշումն է՝ Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման վերաբերյալ, երկրորդը մեր Անկախության հռչակագիրն է, որտեղ ասվում է, թե Հայաստանը սատարում է միջազգային ճանաչման գործընթացը: Սա է գրված հիմնարար փաստաթղթերում: Եթե դուք տեսնում եք իմ մասնակցությունը եւ վարչապետի ուղերձն այստեղ (տվյալ գիտաժողովում), նշանակում է՝ մենք շարունակում ենք գործընթացը նույն ոգով:

- Սփյուռքի հետ ջանքերի համակարգման խնդիր տեսնո՞ւմ եք այս հարցում:

- Սփյուռքի հետ միշտ էլ համակարգվում են ե՛ւ այս հարցը, եւ տարբեր խնդիրներ՝ կապված այլ պետությունների հետ երկկողմ հարաբերությունների հետ: Բայց մենք չենք ընկնում յուրաքանչյուր պետության հետեւից՝ ճանաչման հարցում, սա չէ մեր նպատակը: Նպատակը հետեւյալն է. եթե ճանաչումների թիվը հասավ, ասենք, 100-ի՝ դա չէ մեր նպատակը: Նպատակն է, որ մենք միջազգային կառույցներում տարբեր պետությունների հետ շարունակենք ճանաչման գործընթացը՝ խոսքը եւ ՄԱԿ-ում խնդիրը բարձրացնելու մասին է, եւ տարբեր միջազգային կոնֆերանսների եւ սեմինարների մասնակցելու, ե՛ւ երկկողմ ճանաչումների հարթության մեջ: Մենք որպես պետություն իրավունք չունենք խառնվելու այլ պետության գործերի մեջ՝ ասելու՝ ինչ արեք կամ ինչ մի արեք: Կան տվյալ երկրների քաղաքացիներ՝ կոնկրետ հայեր կլինեն, գիտնականներ կամ մասնագետներ, որ կսատարեն այս գործընթացը, նրա՞նք պետք է խնդիրն արծարծեն, իսկ մեր խնդիրն է համագործակցել այս մարդկանց հետ:

- Ամեն տարի ապրիլի 24-ից առաջ հայ հասարակությունն ընկնում է ենթադրությունների մեջ՝ Օբաման կասի՞ «Ցեղասպանություն» բառը, թե՞ չի ասի, բացի դրանից, գիտեք, Կալիֆոռնիայում հայերը բողոքի միջոցառում էին կազմակերպել՝ Կալիֆոռնիա այցելած Օբամային այդ կոչն ուղղելով:

- Նորից դա Միացյալ Նահանգների հարցն է: Մեծապես կարեւորում եմ սփյուռքի ջանքերը, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների համայնքի, այնտեղ աշխատել եմ, համագործակցել եմ համայնքի հետ: Իհարկե՝ ջանքերը մեծ են, կարեւոր են, բայց ես չեմ կարող համոզված ասել, որ այդ ջանքերը կբերե՞ն նման հայտարարության, թե ոչ: Սա շատ բարդ խնդիր է՝ կապված աշխարհաքաղաքական խնդիրների հետ. մենք միշտ ցանկանում ենք, որ լինենք ուշադրության կենտրոնում եւ մեր մասին բոլորը մեր ուզած ձեւով ասեն, բայց դա այդպես չէ, որովհետեւ գոյություն ունի գեոպոլիտիկա, եւ այստեղ յուրաքանչյուր պետություն իր հաշիվներն ունի, ի՛ր տնտեսական-քաղաքական շահերը: Եվ ինչ-որ մի բան հայտարարելուց կամ քաղաքական որոշում ընդունելուց առաջ այդ շահերով է առաջնորդվում:

- Եթե պատեհ առիթ ունենայիք՝ Էրդողանին ԵԽԽՎ-ում ասածների համար ի՞նչ կպատասխանեիք:

- Նորություն չէ Էրդողանի ասածը, երկրորդ անգամ ասաց նաեւ այն մասին, որ հայերը պիտի իմանան, թե այսքան հազար հայություն կա Թուրքիայում եւ այլն. նույն՝ Հայոց ցեղասպանության շրջանի մտայնությամբ եթե այսօր էլ պիտի ասվի՝ հայեր կան, զգույշ եղեք, եւ այլն, կարծում եմ՝ դա նույն պետական մտածելակերպի, Օսմանյան եւ թուրքական նույն մոդելն է՝ վախեցնելով փոքրամասնություններին եւ այլն: Ես պետք է ասեմ հետեւյալը. եթե Թուրքիան ցանկություն ունի քաղաքակիրթ աշխարհ մտնելու եւ Եվրոպայի մաս դառնալու, իրոք ցանկություն ունի զրոյ խնդիրներով հանդես գալու իր հարեւանների հետ, նա պետք է հարգի փոքրամասնությունների մշակույթը, ավանդույթը, ճանաչի այն, ինչ տեղի է ունեցել անցյալում, ճանաչի անցյալ ռեժիմների կազմակերպած հանցագործությունները այդ փոքրերի նկատմամբ: Մինչեւ Թուրքիան չփոխի իր այդ վերաբերմունքը փոքրի նկատմամբ եւ մինչեւ չդադարի ուժի դիրքերից փոքրի նկատմամբ հանդես գալուց, ոչ մի բան դուրս չի գա: Սա է, որ մենք ասում ենք քաղաքակիրթ աշխարհին, դիմում ենք, որ միջազգային հանրությունը ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Եվ ինքը՝ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հասարակություն

Փոխանցական մուրհակը՝ Հայկական հարցի լուծման «տրոյական ձի՞»

Մեխանիզմի էությունը

Տասը տարի շարունակ կասարողը՝ «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպությունը հայ ընտրախավի ներկայացուցիչներին փորձում էր հասկացնել այդ արսասովոր մեխանիզմը: Այն կանխավ չէր կարող լինել սովորական: Ինչո՞ւ կրկնել միեւնույն սխալները: Ավելի քան 90 տարի քաղաքական գործիչները պահանջում են. «Թուրքիա, ճանաչի՛ր ցեղասպանությունը», իսկ պասասխանը միշտ նույնն է. «Եղել է «հինգերորդ շարասյան» տեղահանություն»:

Եկեք ինքներս մեզ հարց տանք. «Իսկ ինչո՞ւ պետք ուզում ցեղասպանության փաստի ճանաչում»: Փասաթղթերը պասասխան են տալիս. «Որպեսզի սանանք փոխհատուցում՝ դրամ, ունեցվածք, իրավունքներ, աղրանք: 1918-ին միջազգային հանձնաժողովը Լոնդոնում հաշվարկեց 9,5 մլրդ դոլարի վնաս»: Ահա եւ «ի հայտ եկավ» քաղաքական պահանջների ենթատեքստերից մեկը. հարկավոր է Թուրքիայից սանալ «պարտքը»:

Բայց այսօր դա արդեն ոչ թե 9,5 մլրդ է, այլ 1,1 տրիլիոն (հաշվի առնելով անցած տարիների սղաձի գործակիցը): Նման գումար, բնականաբար, չի կարողանա վճարել ոչ Թուրքիան, ոչ էլ մեկ ուրիշ երկիր, այլապես կսնանկանա, չքավոր կդառնա: Ինչո՞ւ դուռը թակենք, եթե նախապես հայտնի է, որ այն երբեք ոչ ոք չի բացելու: Մանավանդ որ գիտենք ժողովրդական իմաստությունը. եթե չես կարող մտնել դռնից, մտիր պատուհանից: Եվ գոյություն ունի մեկ ուրիշ քաղաքական եղանակ, ուրիշ մոտեցում: Դա «տրոյական ձիու»՝ փոխանցական մուրհակի օգտագործումն է: Այն «մտնում է պատուհանից», թափանցելով միջազգային հաշվարկներում օգտագործված արժեքների արխիվներ:

Հայտնի է, որ վճարամիջոցների տեղաշարժը իրականացվում է համակարգչի էկրանի վրա, իսկ դրանց աղահովումը կապված է չիրկիզվող պահարանի հետ: Գլխավորը այդ պահարան թափանցելն է, վճարամիջոցների հաշվեմատյան, այսինքն երկրի բյուջե մտնելը: Օրինակ՝ պրոֆեսիոնալ կերպով հաշվարկային գործառնություններ իրականացնող ֆլիրինգային կենտրոնի միջոցով Թուրքիայի բյուջե մուտք գործելը, այդ թվում՝ օգտագործելով հանդիպական վճարամիջոցների «հաշվանցումը»: Իսկ օրինակա՞ն է այդ ամենը:

Ներկայացված է ՌԴ արդարադատության նախարարության իրավաբանների փորձաքննությունը, ինչպես նաեւ ՌԴ արտոնագիրը փոխանցական մուրհակի ուղղորդված շարժման վերաբերյալ: Ըստ էության Հայաստանի իրավաբանների որեւէ առարկություն գոյություն չունի: Առկա են միայն «դա ռեալ է» բառերը:

Ընտրախավի գոռոզությունը

Սա տաճարի շինարարություն չէ, ոչ էլ բարեգործություն: Որեւէ մեկը ուրիշի գրպանից փող չի խնդրում: Պահանջվում է ընտրախավի մասնակցությունը, քանզի նա կարող է եւ պարտականություն ունի սեփական ժողովրդի հանդեպ: Նա պարտավոր է աղահովել փոխանցական մուրհակների ուղղորդված շրջանառությունը:

Ընդգծում եմ. կասարողը փող չի խնդրում որեւէ մեկի «գրպանից»: Ձեռնարկությունը իր հաշվեկշռի մեջ է ընդունում ոչ նյութական ակտիվ («Փոխանցական մուրհակների ուղղորդված շրջանառության մասին» ՌԴ ծրագիրն ու արտոնագիրը), իսկ հեղինակի (այսինքն՝ իմ) վարձատրությունն ուղղում է կասարողի հաշվարկային հաշվին: Ձեռնարկության բոլոր ծախքերը վերադարձվում են ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայից հետո: Ընտրախավը չի վճարում ոչ մի կոպեկ, բայց առանց ձեռնարկատիրոջ այդ օրինական գործառնությունն անհնար է կասարել:

Բացի դրանից, մուրհակի առաջին գնորդը (ինդոսանտ) պետք է լինի մեր իրավաբանական անձը, քանի որ մենք մուրհակը վաճառում ենք ոչ թե հանուն հասույթի, այլ որոշակի նպասակով.

ա) սանալ հաշվեկշռի պասճենը, որտեղ երեւում է «մուրհակի գնում» եւ «մուրհակի վաճառք» գործառնության անցկացումը: Դա մեզ պետք կգա նաեւ դասարանում, որը ֆինության կառնի դրա պոտենցիալ գնորդի հայտարարությունը. «Խնդրում եմ հասասել մուրհակի իսկությունը»,

բ) ամենքի համար բացահայտել փոխանցական մուրհակի նախնական գինը (շուկայական արժեքը):

Բնականաբար, ընտրախավը պետք է ըմբռնում դրսեւորի եւ արտադրության տնօրեններին ցուցում տա ընդունելու ոչ նյութական ակտիվը, «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու 10.000 ամերիկյան դոլար (պայմանական), ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ժամկետը նշանակելու 13 ամիս (օրենքով դրանից պակաս չի կարելի), հաշվեկշիռ ընդունելու փոխանցական մուրհակը անվանական արժեքի 40 տոկոսով, որոշ ժամանակ անց այն «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպությանը վաճառելու անվանական արժեքի 42 տոկոսով՝ մուրհակի հակառակ երեսին երաշխավորագիր ունենալով վճարողից (Թուրքիայի կառավարություն) այդ փոխանցական մուրհակի ակցեպտ իրականացնելու համար:

Ահա ընտրախավի մասնակցության ամբողջ ծավալը: Բայց ընտրախավը չի ուզում, չի ցանկանում: Իսկ ձեւի համար ասում է. «Սա ռեալ չէ»: Ինչը՞ ռեալ չէ այս փուլում՝ ոչ նյութական ակտիվի ամորտիզացիա՞ն, մուրհակի գնումն ու վաճա՞ռքը: Այս ամենը միանգամայն օրինական է, եւ դա վիճարկել չենք կարող, բայց պնդում են իրենցը՝ «ռեալ չէ»:

Գործողություններ

10 տարի առաջ Մոսկվայի «Ноев ковчег» թերթում, իսկ հետո Երեւանի Ժուռնալիստի տանը կայացած մամլո ասուլիսում հայ հասարակայնությանը ներկայացվեց «Սերունդների հիշողություն» ծրագրի կասարողը: Դա արդեն հիշյալ «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպությունն է: Հեռուսասեսությունն ի լուր աշխարհի տարածեց արտոնագիրը մշակողների, հեղինակների, կասարողների դիմանկարները: Ամեն ինչ բացահայտ է, ազնիվ, օրինական եւ թափանցիկ:

Առաջին փուլում հարկավոր էր թռչել ԱՄՆ, բացել New York life-ի աղահովագրական արխիվները, այնտեղից վերցնել հայերի իսկական ազգանունները, մինչեւ 1915 թ. նրանց կնքած աղահովագրերը: Բայց այդ հսկայական խնդրին եւս ընտրախավը պասասխանեց. «Սա ռեալ չէ»: Եվ հետ քաշվեց:

Այդ ժամանակ կազմակերպության գլխավոր տնօրեն Վալերի Ստեփանյանը (E-mail: potomki5@mail.ru, կոնտակտային հեռախոս (077) 45-18-54) ձեւակերպեց վարկ, դրամ հանգանակեց «Հանուն սերունդների» ՄՀԿ հիմնադիրներից եւ աղահովեց կասարողների աշխասանքը: 7 ամիս անց իսկական փասաթղթերի պասճենները Մոսկվայում էին:

«Դուք այդ ինչպե՞ս արեցիք», զարմացած հարցնում էր ընտրախավը, 1915-ի աղահովագրողների ցանկերը համեմատելով Երեւանում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ցանկերի հետ: Պարզվեց, որ New York life-ի աղահովագիր գնած հայերից ոչ մեկը աղահովագրական գումար չի ստացել. նրա փողերը (ունեցվածքը) մնացել են չպահանջված, եւ հիմա նախնու այդ ունեցվածքը ըստ օրենքի պասկանում է ժառանգորդին՝ սերնդին:

ՖՈՏՈԼՈՒՐ

Այդպիսով, թե կասարողներն ինչպես, ում միջոցով են իրականացրել տվյալ գործողությունը, դա իրենց խնդիրն է, իրենց մասնագիտությունը, իրենց աշխասանքը եւ վաստակը:

Հաջորդ փուլը արդեն պահանջում է ընտրախավի գործողություններ, որպեսզի աղահովվեն փոխանցական մուրհակների տպագրությունը, ձեւավորումը եւ վարումը: Եվ կրկին ասում են. «Սա ռեալ չէ»: Շրջվում են եւ չեն ուզում նույնիսկ լսել: Չեն լսում: Խուլ են: Բայց ասում են. «Եթե ես դուրս եմ գրում մուրհակ, ապա ամենքը գիտեն, որ փող ունեմ եւ կվճարեմ մուրհակը: Իսկ այստեղ ձեր ժառանգը տալիս է մուրհակը եւ ուզում է, որ Թուրքիան նրան վճարի: Խարդախություն է»:

Հենց դա էլ գոռոզություն է. «Ես ամեն ինչ գիտեմ: Իմ խոսքը ճշմարտություն է: Դուք խարդախներ եք, իսկ ես...»:

Այն մարդը, որը չի տարբերում սովորական եւ փոխանցական մուրհակները, կարո՞ղ է արդյոք լինել ընտրախավի ներկայացուցիչ: Անգրագետ նորահարուսը ներկայացնում է ընտրախավը: Մի քեզ ժամանակներ...

Իմ առջեւում պարիս աղահովագիրն է: Նա դրա դիմաց 1914-ին վճարել է 300 ամերիկյան դոլար, որը պետք է ստանար 1916-ին՝ աղահովագրության ժամկետի ավարտից հետո, բայց չստացավ: Թուրքիայի կառավարությունը բռնի տեղահանեց իր հպատակին (պարիս) եւ միաժամանակ արտասեսեց New York life-ի մասնաճյուղը: Այսօր ողջ աշխարհը եւ հենց Թուրքիան ընդունում են բռնի տեղահանության մեղքը:

Ըստ ժառանգական իրավունքի, դա բավարար է, որպեսզի ժառանգը ստանա պարի աղահովագրության 300 դոլարը: Սակայն New York life-ի վաղեմության ժամկետը (3 տարի) ավարտվել է. «Մենք պատրաստ ենք վճարել, բայց չկան իրավական հիմքեր: Նա, ով աղահովագրողին բռնությամբ զրկել է, հենց ինքն էլ պետք է վճարի: Դա նրա հանցանքն է: Իսկ հետո, եթե ուզենա, մեզ կներկայացնի հետընթացական հայց»:

300 դոլարը պարիս վավերականորեն աղացուցված ունեցվածքն է: Հենց դա էլ իմ փոխանցական մուրհակի աղահովումն է: Առաջին շրջանառությունը (առք ու վաճառք) կասարում ենք գիտակցաբար: Վաղուց է ընդունում ոչ նյութական ակտիվ («Փոխանցական մուրհակների ուղղորդված շրջանառության մասին» ՌԴ ծրագիրն ու արտոնագիրը), իսկ հեղինակի (այսինքն՝ իմ) վարձատրությունն ուղղում է կասարողի հաշվարկային հաշվին: Ձեռնարկության բոլոր ծախքերը վերադարձվում են ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայից հետո: Ընտրախավը չի վճարում ոչ մի կոպեկ, բայց առանց ձեռնարկատիրոջ այդ օրինական գործառնությունն անհնար է կասարել:

Բացի դրանից, մուրհակի առաջին գնորդը (ինդոսանտ) պետք է լինի մեր իրավաբանական անձը, քանի որ մենք մուրհակը վաճառում ենք ոչ թե հանուն հասույթի, այլ որոշակի նպասակով.

ա) ստանալ հաշվեկշռի պասճենը, որտեղ երեւում է «մուրհակի գնում» եւ «մուրհակի վաճառք» գործառնության անցկացումը: Դա մեզ պետք կգա նաեւ դասարանում, որը ֆինության կառնի դրա պոտենցիալ գնորդի հայտարարությունը. «Խնդրում եմ հասասել մուրհակի իսկությունը»,

բ) ամենքի համար բացահայտել փոխանցական մուրհակի նախնական գինը (շուկայական արժեքը):

Բնականաբար, ընտրախավը պետք է ըմբռնում դրսեւորի եւ արտադրության տնօրեններին ցուցում տա ընդունելու ոչ նյութական ակտիվը, «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու 10.000 ամերիկյան դոլար (պայմանական), ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ժամկետը նշանակելու 13 ամիս (օրենքով դրանից պակաս չի կարելի), հաշվեկշիռ ընդունելու փոխանցական մուրհակը անվանական արժեքի 40 տոկոսով, որոշ ժամանակ անց այն «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպությանը վաճառելու անվանական արժեքի 42 տոկոսով՝ մուրհակի հակառակ երեսին երաշխավորագիր ունենալով վճարողից (Թուրքիայի կառավարություն) այդ փոխանցական մուրհակի ակցեպտ իրականացնելու համար:

Ահա ընտրախավի մասնակցության ամբողջ ծավալը: Բայց ընտրախավը չի ուզում, չի ցանկանում: Իսկ ձեւի համար ասում է. «Սա ռեալ չէ»: Ինչը՞ ռեալ չէ այս փուլում՝ ոչ նյութական ակտիվի ամորտիզացիա՞ն, մուրհակի գնումն ու վաճա՞ռքը: Այս ամենը միանգամայն օրինական է, եւ դա վիճարկել չենք կարող, բայց պնդում են իրենցը՝ «ռեալ չէ»:

Գործողություններ

10 տարի առաջ Մոսկվայի «Ноев ковчег» թերթում, իսկ հետո Երեւանի Ժուռնալիստի տանը կայացած մամլո ասուլիսում հայ հասարակայնությանը ներկայացվեց «Սերունդների հիշողություն» ծրագրի կասարողը: Դա արդեն հիշյալ «Հանուն սերունդների» միջազգային հասարակական կազմակերպությունն է: Հեռուսասեսությունն ի լուր աշխարհի տարածեց արտոնագիրը մշակողների, հեղինակների, կասարողների դիմանկարները: Ամեն ինչ բացահայտ է, ազնիվ, օրինական եւ թափանցիկ:

Առաջին փուլում հարկավոր էր թռչել ԱՄՆ, բացել New York life-ի աղահովագրական արխիվները, այնտեղից վերցնել հայերի իսկական ազգանունները, մինչեւ 1915 թ. նրանց կնքած աղահովագրերը: Բայց այդ հսկայական խնդրին եւս ընտրախավը պասասխանեց. «Սա ռեալ չէ»: Եվ հետ քաշվեց:

Այդ ժամանակ կազմակերպության գլխավոր տնօրեն Վալերի Ստեփանյանը (E-mail: potomki5@mail.ru, կոնտակտային հեռախոս (077) 45-18-54) ձեւակերպեց վարկ, դրամ հանգանակեց «Հանուն սերունդների» ՄՀԿ հիմնադիրներից եւ աղահովեց կասարողների աշխասանքը: 7 ամիս անց իսկական փասաթղթերի պասճենները Մոսկվայում էին:

«Դուք այդ ինչպե՞ս արեցիք», զարմացած հարցնում էր ընտրախավը, 1915-ի աղահովագրողների ցանկերը համեմատելով Երեւանում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ցանկերի հետ: Պարզվեց, որ New York life-ի աղահովագիր գնած հայերից ոչ մեկը աղահովագրական գումար չի ստացել. նրա փողերը (ունեցվածքը) մնացել են չպահանջված, եւ հիմա նախնու այդ ունեցվածքը ըստ օրենքի պասկանում է ժառանգորդին՝ սերնդին:

Բրայզան այցելել է Նախիջեւան եւ հեսաֆրիվել Զուղայի խաչքարերով

Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզայի վերջին ժամանակներում արած հայտարարություններն ու գործունեությունը բավական ուշագրավ են: Այն առումով, որ տպավորություն է ստեղծվում, թե Բրայզան, օգտվելով ԱՄՆ-ի նկատմամբ Բաքվի վարած «խռոված քաղաքականությունից», ամեն կերպ ամերիկահայ համայնքի առջեւ փորձում է արադարացնել իր նշանակումը: Բաքվում ամերիկյան դեսպանի պաշտոնը, որը թափուր մնաց շուրջ մեկ տարի, ամերիկահայ համայնքը, ինչպես նաեւ որոշ սենատորներ չէին ցանկանում վստահել ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին ամերիկացի համանախագահ, ազգությամբ թուրք (ըստ ոմանց՝ քուրդ) Զեյնո Բարանի ամուսին Մեթյու Բրայզային: Ամենեւին էլ փաստ չէ, որ վերջինս կշարունակի զբաղեցնել դեսպանի պաշտոնը, քանի որ, համաձայն ամերիկյան օրենսդրության, նորընտիր Սենատը դեռ կարող է այս աշնանը չհամաձայնել նախագահ Օբամայի այս նշանակմանը, մանավանդ որ Բրայզայի թեկնածության հաստատմանը վետո կիրառած ամերիկացի երկու սենատորներից մեկը վերընտրվել է:

Միգուցե նաեւ այս ամենը հաշվի առնելով՝ Մեթյու Բրայզան օրեր առաջ, անդրադառնալով Ստեփանակերտի օդանավակայանի շուրջը բարձրացած աղմուկին, «հասկացրեց» Բաքվին, որ դեռի Նախիջեւան թռիչքները անցնում են Հայաստանի օդային տարածքով, մինչդեռ հայկական կողմը չի սպառնում ոչնչացնել այդ քաղաքացիական ինքնաթիռները, ինչը միջազգային պրակտիկայում անթույլատրելի է: Բրայզան հիշատակում է հենց Նախիջեւանը, ինչը, նույնպես գաղտնիք չէ ոչ ոքի համար, հայադրբեջանական, այս դեպքում նաեւ ավելացրած՝ թուրքական, «մեծ հիմնահարցերից» մեկն է: Երբեմնի հայկական Նախիջեւանին անցյալ տարի տրվեց անգամ միջազգային որակավորում՝ «Ադրբեջանի սեւ այգին», նկատի ունենալով երկրամասում մարդու իրավունքների պաշտպանության տխուր իրավիճակը: Հիշեցնենք՝ եվրոպացի մի շարք փորձագետների, դիվանագետների ու լրագրողների՝ Բաքուն թույլ չտվեց մուտք գործել Նախիջեւանի Բենաբյար գյուղ, որտեղ ավելի վաղ տեղ



էին գտել անգամ շարային քաղաքացիների ինքնահրկիզման դեպքեր: Ինչեւէ. հասկանալի արեւմտյան գործիչներն ու դիվանագետները, ստացվում է, հասկացել են, որ Ադրբեջանին «կսմթելու» լավագույն ձեւը Նախիջեւանի մասին հիշատակումն է:

Դեռ նոր էր հարեւան երկրի քաղաքական-լրատվական դաշտը «մարսել» ԱՄՆ դեսպանի՝ Նախիջեւանի մասին հիշատակումը, երբ Մեթյու Բրայզան այս անգամ ոչ թե խոսեց, այլ հենց այցելեց Նախիջեւան: Ժամանակը, պետք է նկատել, բոլորովին էլ պատահական չէ ընտրված. ինչպես երեկվա համարում տեղեկացրինք՝ Ադրբեջանի ՊՆ-ն միակողմանի չեղյալ է հայտարարել ԱՄՆ-ի հետ համատեղ զորավարժությունները՝ դժգոհ լինելով Վաշինգտոնի՝ մեր տարածաշրջանում վարած քաղաքականությունից, ավելի կոնկրետ՝ Հայաստանի նկատմամբ ճնշումներ կիրառելու ցանկության բացակայությունից: Բացի սրանից՝ ապրիլի 15-ին ելույթ ունենալով «Ազատություն» ռադիոկայանով, Երեւանում ԱՄՆ դեսպան Յովանովիչը հայտարարեց, որ ԱՄՆ-ը դադարեցնում է Հայաստանի ֆինանսավորման ծրագիրը՝ «Հազարամյակների մարտահրավերները» ծրագրով նախատեսված: Հետեւաբար, տարածաշրջանում ամերիկյան «հավասարակշիռ քաղաքականություն» ցույց տալու համար, Բրայզայի՝ Նախիջեւան այցը եւ այնտեղ արած հայտարարությունները արդարացված են:

Իսկ Նախիջեւանում Բրայզան երկօրյա այցով է: Նա արդեն հանդիպել է երկրամասի խորհրդարանի ղեկավար Վասիֆ Թալիբովի հետ, նախատեսվում են նաեւ ԱՄՆ դեսպանի հանդիպումները Նախիջեւանի իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Թալիբովի հետ դեսպանը քննարկել է՝ «Նախիջեւանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ընդհանուր իրավիճակին առնչվող հարցեր»: Արդեն լրագրողների հետ հանդիպմանը Բրայզան, ըստ «Թուրան»-ի, հայտնել է, որը ինքը նաեւ «հետաքրքրվել է շրջանում պահվող պատմական հուշարձանների, մասնավորապես, Նոր Զուղայի խաչքարերի վիճակով»: Դեսպանն ափսոսանք է հայտնել, որ այս անգամ ինքը չի կարողացել այցելել Զուղա՝ «տեղում իրավիճակին ծանոթանալու»՝ «Բայց հաջորդ այցիս ընթացքում անպայման կլինեմ այնտեղ», նշել է Բրայզան՝ հավելելով, ավելի ճիշտ՝ ընդգծելով. «Զուլֆայում գտնվող հուշարձանները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ես ինքս այդ թեմաներով Հայաստանում մասնակցել եմ քննարկումներին...»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Սամբուլում հարգանքի տուրք ցեղասպանության զոհերի հիշատակին

1-ին էջից

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների միության Սամբուլի մասնաճյուղին, որի հետ իբրեւ միության անդամ իր տիկնոջ մահից հետո շարունակում է միայնակ համագործակցել Ռագբի Զարաֆոլուն, ապա այս կազմակերպությունը բացի ժխտողականությունը դատապարտելուց, ինչպես նաեւ Թուրքիայում Հայոց ցեղասպանության ճանաչման ջանքեր գործադրելուց, սկսել է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ կազմակերպել ապրիլի 24-ին:

Անցյալ տարի այս միջոցառումը կազմակերպվել էր Սամբուլի «Թաֆսիմ» հրապարակում: Այս տարի որպես ցեղասպանության զոհերի հիշատակման վայր ընտրվել է «Սուլթանահմեդ» հրապարակը: Միջոցառման առնչությամբ Մարդու իրավունքների միության Սամբուլի մասնաճյուղը եւ միության Ռասիզմի ու խտրականության դեմ պայքարի հանձնաժողովը հրապարակել են հաղորդագրություն, որտեղ շարադրված են միջոցառման մանրամասները:

Այդ իսկ պատճառով հաղորդագրությունը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը.

«1915-ի ապրիլի 24-ին Իթթիհադ վե Թերաֆի կուսակցության հրահանգով իրենց տներից հավաքել են Սամբուլի հայ համայնքի քաղաքականության, գիտության, գրականության եւ այլ ոլորտներում աչքի ընկնող առաջնակարգ գործիչներին: Դրա նպատակը մտավորականության ոչնչացմամբ հայ համայնքի գլխատումն էր, որովհետեւ որոշում էր ընդունված, ըստ որի՝ Անատոլիայում հազարավոր տարիների վաղեմություն ունեցող հայ տարրն արմատախիլ էր արվելու, սովի, թշվառության, կոտորածների միջոցով ի սպառ ոչնչացվելու էր: Դա անհրաժեշտ էր դարձնում վերացնել օսմանցի հայերի առաջնորդներին, որպեսզի ընդվզում չլինի:

Այդ իսկ պատճառով ապրիլի 24-ը խորհրդանշում է հայ մտավորականների ոչնչացմամբ սկզբնավորված ցեղասպանության գործընթացի առաջին փուլը: Դրանով հանդերձ, ապրիլի 24-ը սոսկ հայերի եւ ասորիների ցեղասպանության խորհրդանիշը չէ: Դա խորհրդանշում է նաեւ մեր երկրի պատմության կեղծիքների հիման վրա շարադրումը, մի ամբողջ ժողովրդի արմատավորված մշակույթի եւ պատմական ժառանգության հետ մնացած բոլոր հետքերի վերացումը:

Թուրքիայում քաղաքները գաղտնիքի պես քողարկված պատմություններ են պահպանում: Մարդիկ առանց իմանալու անցնում են «հանցանքի վայրի» կողքով: Ահա դրանցից մեկը՝ փրկվածների հուշերում հիշատակվող Իբրահիմ փաշայի պալատն է, որն այսօր վերածվել է «Սուլթանահմեդ» հրապարակի «Իսլամական ստեղծագործությունների թանգարանի»:

Ժամանակին այս շենքը քաղաքի կենտրոնական բանտն էր, որտեղ մինչեւ Անատոլիա ախտորի ուղարկելը պահել էին ձերբակալված հայ մտավորականներին: Մենք այս տարի Մարդու իրավունքների միության Սամբուլի մասնաճյուղի անունից 1915-ի ապրիլի 24-ին ձերբակալված եւ անհետ կորած հայ մտավորականներին հիշատակելու ենք հենց «Իսլամական ստեղծագործությունների թանգարանի» առջեւ եւ բացականչելու ենք. «Ահա հայ մտավորականներին նախքան դեպի մահ ուղարկելը հենց այստեղ են պահել: Սա Սամբուլի հանցանքի ամենադաժան վայրերից մեկն է»:

Քաղաքի իրական պատմությունը երեւան հանելու, ապրիլի 24-ին դեպի մահ ուղարկված հայ մտավորականներին հիշատակելու եւ արդարության վերականգնման պայքարին մասնակցելու համար կոչ ենք անում բոլորին 2011 թ. ապրիլի 24-ին՝ կիրակի օրը, ժամը 14.00-ին հավաքվել «Իսլամական ստեղծագործությունների թանգարանի» մոտ եւ հարգանքով խոնարհվել ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի առջեւ:

ՆԱՏՕ-ի ռմբակոծումների խաղաղ զոհեր Լիբիայում

Երեկ գիշեր Լիբիայում ՆԱՏՕ-ի ռմբակոծությունների հետեւանքով զոհվել են 11 եւ վիրավորվել 18 խաղաղ բնակիչներ: Պետական «Ալ Զամահիրիա» հեռուստալիքի տվյալներով, միայն Տրիպոլիի շրջաններից մեկում «խաչակիր ագրեսորների» հարվածներից զոհվել է 7 մարդ, հրթիռակոծման հետեւանքով ավերվել է մի քանի տուն:

Լիբիական Զանա գործակալությունը հավելում է, որ Տրիպոլիից 70 կմ հարավ-արեւմուտք գտնվող Բիր Գանամ քաղաքի ռմբակոծման հետեւանքով զոհվել է 4 մարդ, ավերվել են ենթակառույցի օբյեկտներ:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Ֆրանսիան հաստատել է լիբիացի ապստամբներին օգնելու նպատակով 10 զինվորական խորհրդական Լիբիա գործուղելու իր մտադրությունը: Ավելի վաղ Մեծ Բրիտանիան հայտարարել էր մի խումբ բրիտանացի զինվորական խորհրդականների գործուղման մասին:

Լիբիայի արտգործնախարարը քննադատել է այդ քայլերը, ասելով, որ դրանք միայն կերկարաձգեն ռազմական գործողությունները:

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին իր հերթին խոստացել է սաստկացնել ՆԱՏՕ-ի օդային հարվածները Լիբիային: Կառավարության ներկայացուցիչ Ֆրանսուա Բարուենը հաստատել է, որ Ֆրանսիան մտադիր է Լիբիա ուղարկել ցամաքային զորքեր: Սակայն պաշտպանության նախարար Ժերար Լոնգեն ասել է, որ տվյալ հարցը պետք է քննարկվի ՄԱԿ-ի ԱԽ-ում:

BBC-ն նշում է, որ Ֆրանսիայում եւ Մեծ Բրիտանիայում ահագնանում է տագնապը այն կապակցությամբ, որ լիբիական ռազմաբազան կարող է վերածվել երկարատեւ ռազմական հակամարտության:

Ճապոնիան արգելեց մուտքը «Ֆուկուշիմա-1»-ի շրջակա 20 կմ-անոց գոտի

Ճապոնիայի իշխանությունները լիովին արգելել են մուտքը «Ֆուկուշիմա-1» վթարված ԱԷԿ-ի շրջակա 20 կիլոմետրանոց գոտի: Որոշումն ընդունվել է այն բանից հետո, երբ ոստիկանությունը 20 կիլոմետրանոց գոտում հայտնաբերել է վեց տասնյակ ընտանիքների, որոնք տարհանման կարգադրությանը չենթարկվելով՝ մնացել են իրենց տներում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Որոշումը մեկնաբանելիս կառավարության գլխավոր քարտուղար Յուկիո Էդանոն ասել է, որ ատոմակայանում «իրավիճակն անկայուն է»: Նրա խոսքերով, 20 կիլոմետրանոց գոտուց տարհանված բնակիչներին կթույլատրվի 2 ժամով տուն վերադառնալ անձնական իրեր վերցնելու: Յուրաքանչյուր ընտանիք կարող է ուղարկել միայն մեկ ներկայացուցչի:

Կառավարության պաշտոնական ներկայացուցիչը նաեւ հայտնել է, որ մոտ ժամանակներս տարհանվելու են 20 կիլոմետրանոց գոտուց դուրս գտնվող մի քանի բնակավայրերի բնակիչներ:

ԱԷԿ-ից 20-30 կմ հեռավորության վրա բնակվող անձանց ներկայումս խորհուրդ է տրվում շաբաթվա կարճ ժամանակով լինել դրսում եւ հնարավորության դեպքում տեղափոխվել առավել ապահով վայրեր:

«Ֆուկուշիմա-1»-ի շրջակա 30 կիլոմետրանոց գոտում նախքան մարտի 11-ի աղետը ապրում էր 48 հազար ընտանիք: Ատոմակայանի օպերատոր TEPCO ընկերությունը արդեն սկսել է նախնական փոխհատուցումներ վճարել տարհանված անձանց. ընտանիքներին՝ 12 հազար, անհատներին՝ 9 հազար դոլարին համարժեք դրամ: Փոխհատուցման ամբողջական գումարը հայտնի կդառնա միայն վնասի գնահատումից հետո:

Ճշտում է Սիրիայի դեսպանությունը

Մեր թերթի ապրիլի 20-ի համարում գրել էինք, որ սիրիական «իրավապահ մարմինները կրակ են բացել Հոմսի կենտրոնական հրապարակում հավաքված մոտ 20 հազար ցուցարարների վրա: Կան վիրավորներ»: Այս կապակցությամբ Հայաստանում Սիրիայի դեսպանությունից ստացել ենք ճշգրտող նամակ, որը տեղեկացնում է, որ այդ «լուրն ընդհանրապես իրականությանը չի համապատասխանում, եւ իրավապահ մարմինները ոչ ոքի վրա կրակ չեն բացել, այլ զինված ավազակախմբերը հենց իրենք են կրակ բացել ցուցարարների եւ իրավապահ մարմինների վրա, որոնք պաշտպանում էին ցուցարարներին եւ գտնվում էին նրանցից 300 մետր հեռավորության վրա»:

Դեսպանությունը ճշտում է նաեւ, որ մենք չափազանցրել ենք ցուցարարների թիվը, «որովհետեւ այդ կենտրոնական հրապարակում, որի մասին նշել եք, 2 հազար հոգուց ավել չի տեղավորվում, եւ այնտեղ գտնվողների առավելագույն թիվը 4 հազար է եղել, այլ ոչ թե 20 հազար»:

Վերջում դեսպանությունը խորհուրդ է տալիս դիմել Հոմսի հայերին, որոնք բնակվում են այդ քաղաքի «Հայյալ Արման» (Հայերի թաղ) շրջանում, քանի որ տեղի հայերն «ավելի անկեղծ են՝ քան կողմնակալ լրատվական գործակալությունները»:

Զարքերի արտաքսման ծես Քիշքեկի խորհրդարանում

Ապրիլի 21-ի առավոտյան ղրղզ պատգամավորները խորհրդարանի շենքից զարքերի արտաքսման ծես են կատարել, հաղորդում է 24.kg լրատվական գործակալությունը:

Պատգամավորները չար ոգիների արտաքսման նպատակով իրականացրել են զոհաբերություն, մորթելով յոթ ոչխար: Թե կոնկրետ որտեղ են մորթել, չի նշվում:

Խորհրդարանի նախագահ Ահմատբեկ Կելդիբեկովը հայտարարել է, որ ծեսի իրականացման համար յուրաքանչյուր պատգամավորի աշխատավարձից պահել էր 700 սոմ (15 դոլար): Նա նշել է, որ հավաքված գումարի մի մասը ծախսվել է ոչխարների վրա, իսկ մնացյալ փողը հատկացվել է բարեգործությանը, փոխանցվելով ծերանոցների եւ գիշերօթիկների հաշիվներին:

Ղրղզստանի խորհրդարանում վերջերս տեղի էր ունեցել մի քանի ծեծկռտուք: Առայժմ հայտնի չէ, թե երեկվա ծիսակատարությունը որքանով է ազդել խորհրդարանական մթնոլորտի բարելավման վրա:

ՊԱՐԶԵՑՈՒՄ

Հանքարդյունահանողները կազատվեն...

2-րդ էջից

Կառավարության ընդունած նոր որոշմամբ, լեռնահատկացման ակտ ստացած հանքարդյունահանողներին հնարավորություն է տալիս օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերն անցնելուց հետո լուծել նաեւ այլ նշանակության հողերը արդյունաբերական, արտադրական կամ ընդերօգտագործման փոփոխելու հարցը: Սա ձեռնտու է ոչ միայն հանքարդյունահանողներին, որոնք ազատվում են իրավական հակասությունների մեջ հայտնվելուց, այլ նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ներկայումս գյուղատնտեսական նշանակության հողերի շահագործման համար սահմանված են անհամեմատ ավելի փոքր հարկեր եւ վարձակալության վճարներ: Նոր կարգով տեղական ինքնակառավարման մարմինները կստանան մի քանի անգամ ավելի շատ գումարներ: Մասնավորապես, եթե գյուղատնտեսական նշանակության հողամասի 1 հա վարձակալության համար հանքարդյունահանողը տարեկան վճարում է 1000 դրամ, ապա նոր փոփոխությամբ՝ 22 հազար դրամ: Իսկ եթե ցանկանում է ոչ թե վարձակալել, այլ սեփականաշնորհել այն հողը, որի ընդերքից հանքանյութ է արդյունահանում, ապա այս դեպքում արդեն 1 քմ-ի դիմաց 300 դրամի փոխարեն, հողի նշանակությունը փոխելուց հետո պետք է վճարի 1 քմ համար 2300 դրամ: Այս հանգամանքը երեկ կառավարության նիստի ժամանակ շեշտեց նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը, այս որոշումն արտասական համարելով:

«Այդ գումարներն ըստ էության այսօր փոշիանում են: Հիմնական խնդիրն այն է, որ բյուրոկրատական գործընթացը շատ երկար է, բաբքուկները՝ շատ, եւ մարդիկ չեն կարողանում բոլոր ընթացակարգերն անցնել: Այս որոշումով մենք հնարավորություն ենք տալիս այն սուբյեկտներին, որոնք դեռեւս չեն փոխել կատեգորիան, արագացված գործընթացով դիմել տարածքային կառավարման նախարարություն եւ շատ կարճ ժամկետում փոխել հողերի կատեգորիան: Արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները երկու ամսում կտրուկ ավելանալու են», նման համոզմունք հայտնեց երեկ վարչապետը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս/թ մայիսի 17-ին՝ 14.00-ին, Արմավիր մարզպետարանում (ք. Արմավիր) տեղի կունենա Հայաստանի նոր միջուկային էներգաբլոկի բնաթափանցիկ (շրջակա միջավայրի վրա ազդեցության) հաշվետվության հասարակական լսումները:

Հայաստանի նոր միջուկային էներգաբլոկի բնաթափանցիկ (շրջակա միջավայրի վրա ազդեցության) հաշվետվությանը մանրամասն կարելի է ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության՝ www.mnp.am եւ ՀՀ էներգետիկայի եւ բնապահպանության նախարարության www.minenergy.am կայքերից, ինչպես նաեւ զանգահարելով ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության աշխատակազմի ատոմային էներգետիկայի վարչություն՝ հեռ. 523 447, 528 243 եւ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ հեռ. 221 485:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում գործող «Աբգար» ՍՊԸ-ի՝ խմելու-կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 1.0 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 29-ին ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

AMERIABANK

Առաջին հայկական բանկը Apple Store-ում

Ամերիաբանկը Apple Store-ում ներկայացված առաջին հայկական բանկն է: Համաձայն իր ռազմավարությամբ ամրագրված խաղախականության՝ Ամերիաբանկը շարունակում է ներդրումներ իրականացնել ինովացիաների ներմուծման, առաջադեմ տեխնոլոգիական միջոցների զարգացման ուղղությամբ:

Բանկի հերթական ինովացիան այս անգամ հնարավորություն է ընձեռում ամենուր հասանելի լինել Բանկի վերաբերյալ տեղեկատվությանը՝ iPhone տեսակի հեռախոսի միջոցով:

Պարզապես բեռնելով Apple Store-ում Ամերիաբանկի ծրագիրը (Application)՝ հնարավոր է ծանոթանալ Բանկի նորություններին, փոխարժեքներին, առաջարկվող ծառայությունների փաթեթին եւ տրամադրման պայմաններին, մասնաճյուղերի եւ բանկոմատների հասցեներին: Միաժամանակ հնարավորություն է ստեղծված ինտերակտիվ քարտեզի միջոցով արագ կողմնորոշվել անհրաժեշտ բանկոմատի կամ մասնաճյուղի հասցեի փնտրման հարցում:

Ներկայումս տարվում են աշխատանքներ մոտ ապագայում ներկայացված հիմքի վրա Mobile Banking-ը զարգացնելու ուղղությամբ, որը հաճախորդների համար գործարքների կատարման հնարավորություն կստեղծի իրենց անձնական iPhone հեռախոսներից:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01/01/11

Ձեւ N1

Ծածկագիր

Կազմակերպության անվանումը	«Սարաթ» ՍՊԸ
Փաստացի գործունեություն	Շահումով խաղի կազմակերպում
հիմնական երկու տեսակները	
Պետական ռեգիստրում գրանցման համարը	26411004760
Հարկ վճարողի հաշվառման համարը	00057235
Չափի միավորը	հազար դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 1 թաղ. 18 շ, բն. 36
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ձրվեժ, 3-րդ հասվածի թիվ 6՝ 59.6 քմ. տնտեսական շինություն

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	2526.0	2083.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	2526.0	2083.0
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	842.0	267.8
Այլ դեբիտորական պարտքեր	180	50.0	-
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1318.0	3059.2
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	2210.0	3327.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	4736.0.0	5410.0

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	1050.0	1050.0
Կուտակված շահույթ	270	-	3358.0
Պահուստային կապիտալ	280	886.0	886.0
Ընդամենը սեփական կապիտալ	300	1936.0	5294.0
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0.0	0.0
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380	2800.0	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ	430	-	116.0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	2800.0	116.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	4736.0	5410.0

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01/01/10-01/01/11

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	87781.0	80660.2
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	51471.0	41050.0
Համախառն շահույթ (վնաս)	030	36310.0	39610.2
Վարչական ծախսեր	050	36310.0	35799.0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	-	3811.2
Գործառնական շահույթ (վնաս)	090	-	3811.2
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	-	(453.2)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	-	3358.0
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	-	3358.0
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	-	3358.0

Ղեկավար *Ա. Վարդանյան*

Աուդիտորական եզրակացություն

«Սարաթ» ՍՊԸ ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սարաթ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական ապացույցները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական ապացույցները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

«ԱՎԱ-Աուդիտ փարթներս» ՍՊԸ
Տնօրեն
Աուդիտոր
Երեւան
05 ապրիլի 2011 թ.

Ա. Պողոսյան
Ա. Սիրեկանյան

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01/01/11

Ձեւ N1

Ծածկագիր

Կազմակերպության անվանումը	«ԷԿԱՏ» ՍՊԸ
Փաստացի գործունեություն	Շահումով խաղի կազմակերպում
հիմնական երկու տեսակները	
Պետական ռեգիստրում գրանցման համարը	27111003430
Հարկ վճարողի հաշվառման համարը	01401421
Չափի միավորը	հազար դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 1 թաղ. 32 շ, բն. 71
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ Արարատի մարզ, գ. Այնթապ, 1 փող., թիվ 54 առեւտրի սրահից, գրասենյակից 1 հարկը /121.8 քմ./: ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ձրվեժ 17 փող., 2 բնակելի տան մաս:

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Անշարժ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	3750.0	5417.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	3750.0	5417.0
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	54.0	772.0
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	5232.0	5862.0
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	5286.0	6634.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	9036.0	12051.0

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50.0	50.0
Կուտակված շահույթ	270	4089.0	11476.0
Պահուստային կապիտալ	280	215.0	215.0
Ընդամենը սեփական կապիտալ	300	4354.0	11741.0
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0.0	0.0
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	4432.0	13.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	250.0	-
Այլ կրեդիտորական պարտքեր	450	-	297.0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	4682.0	310.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	9036.0	12051.0

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01/01/10-01/01/11

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	153928.0	158810.0
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	80274.0	82014.0
Համախառն շահույթ (վնաս)	030	73654.0	76796.0
Վարչական ծախսեր	050	69300.0	66987.0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	4354.0	9809.0
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	50.0	
Գործառնական շահույթ (վնաս)	090	4304.0	9809.0
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	-	1667.0
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	4304.0	11476.0
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	4304.0	11476.0
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	4304.0	11476.0

Ղեկավար *Ա. Թարգյան*

Աուդիտորական եզրակացություն

«Էկաս» ՍՊԸ ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խասաս» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական ապացույցները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական ապացույցները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

«ԱՎԱ-Աուդիտ փարթներս» ՍՊԸ
Տնօրեն
Աուդիտոր
Երեւան
07 ապրիլի 2011 թ.

Ա. Պողոսյան
Ա. Պողոսյան

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01/01/11

Ձեւ N1

Ծածկագիր

Կազմակերպության անվանումը	«Տաշյանա» ՍՊԸ
Փաստացի գործունեություն	Շահումով խաղի կազմակերպում
հիմնական երկու տեսակները	
Պետական ռեգիստրում գրանցման համարը	26402003499
Հարկ վճարողի հաշվառման համարը	00038352
Չափի միավորը	հազար դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երեւան, Ա. Խաչատրյան 29, բն. 25
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաֆար-Թաիրով, Մայրաքաղաքային 182, առեւտրի սրահ

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	2500.0	2500.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	2500.0	2500.0
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	30.0	46.0
Այլ դեբիտորական պարտքեր	180	2.0	-
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	13503.0	1888.0
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	13535.0	1934.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	16035.0	4434.0

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50.0	50.0
Կուտակված շահույթ	270	15787.0	(9193.0)
Ընդամենը սեփական կապիտալ	300	15837.0	(9143.0)
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0.0	0.0
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380	-	12550.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	121.0	970.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	27.0	57.0
Այլ կրեդիտորական պարտքեր	450	50.0	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	198.0	13577.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	16035.0	4434.0

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01/01/10-01/01/11

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	122654.0	27402.0
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	79621.0	15402.0
Համախառն շահույթ (վնաս)	030	43033.0	12000.0
Վարչական ծախսեր	050	31587.0	36189.0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	11446.0	(24189.0)
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	718.0	137.0
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	20.0	-
Գործառնական շահույթ (վնաս)	090	12144.0	(24052)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	-	(900.0)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	12144.0	(24952.0)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	12144.0	(24952.0)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	(143.0)	(28.0)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	12001.0	(24980.0)

Ղեկավար *Ա. Իսկանդարյան*

Աուդիտորական եզրակացություն

«Տաշյանա» ՍՊԸ ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տաշյանա» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական ապացույցները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական ապացույցները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

«ԱՎԱ-Աուդիտ փարթներս» ՍՊԸ
Տնօրեն
Աուդիտոր
Երեւան
02 ապրիլի 2011 թ.

Ա. Պողոսյան
Ա. Սիրեկանյան

Վարուժան Հակոբյանը զրկվեց ուղեգրից

Ավարտին է մոտենում շախմատի ԱՄՆ-ի առաջնության նախնական փուլը, որում խաղարկվում են կիսաեզրափակիչի ուղեգրերը: Այս առումով նախավերջին՝ 6-րդ տուրը վճռորոշ էր Վարուժան Հակոբյանի համար: Կիսաեզրափակիչի ուղեգրերին հավակնելու համար նրան անհրաժեշտ էր վերջին 2 պարտիաներում հաղթել: Սակայն 6-րդ տուրում Վարուժանը սեւերով պարտվեց Ալեխանդր Իվանովին ու զրկվեց պայքարը շարունակելու նույնիսկ տեսական հնարավորությունից: Վարուժան Հակոբյանը 2,5 միավորով 5-րդ տեղում է:

Ամենայն հավանականությամբ 1-ին ենթախմբից կիսաեզրափակիչ դուրս կգան Գասա Կամսկին եւ Յուրի Շուլմանը: Կամսկին հաղթելով Դանիել Նարոդիցկուն, 4,5 միավորով գլխավորում է աղյուսակը: Նրան կես միավոր զիջող Յուրի Շուլմանը ոչ-ոքի խաղաց Ռեյ Ռոբսոնի հետ: Յան Էլվեսը հաղթեց Ալեխանդր Usրիպունսկուն:

Ավարտական տուրում Գասա Կամսկին մրցելու է Յուրի Շուլմանի հետ: 3,5 միավոր ունեցող Ալեխանդր Իվանովի մրցակիցն է 3 միավոր ունեցող Ռեյ Ռոբսոնը: Հենց այս երկու պարտիաներն էլ կորոշեն 1-ին ենթախմբից պայքարը շարունակող 2 ուժեղագույններին:

2-րդ ենթախմբում ուղեգրերից մեկի տերն արդեն հայտնի է: Ռոբերտ Հեսը սեւերով հերթական հաղթանակը տոնելով Լարի Քրիստիանսենի նկատմամբ, վաստակեց 5 միավոր ու անհասանելի դարձավ մրցակիցների համար: Նրանից 1,5 միավորով հետ են մնում Ալեխանդր Օնիշչուկն ու Սեմ Շենկլենդը: Նրանք հաշտություն կնքեցին համապատասխանաբար Յասեր Սեյրավանի եւ Բենջամին Ֆինեգոլդի հետ: Գեորգի Կայդանովը հաղթեց Ալեխանդր Շաբալովին:

Կանանց մրցապայքարում խաղարկվող 4 ուղեգրերի համար բավական թեժ մրցավեճ է ծավալվել: Դրանցից մեկն իր համար արդեն ապահովել է Իրինա Կրուշը, որը հերթական հաղթանակը տոնելով Իրինա Զենյուկի նկատմամբ, 5 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: Հաջողությանը մոտ է նաեւ Տաթեւ Աբրահամյանը, որը ոչ-ոքի խաղալով Ալիսա Մելեխինայի հետ, վաստակել է 4 միավոր: Նույնքան միավոր ունեն նաեւ Սաբինա Ֆոյտորն ու Քամիլա Բագինսկայտեն, որոնց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի:

Առաջատար քառյակի միակ հետապնդողն Աննա Զատոնսկիխն է, որը հաղթելով Ռուսուդան Գոլեթիանիին, վաստակեց 3 միավոր եւ դեռեւս տեսական հնարավորություններ ունի պայքարելու ուղեգրի համար: Ավարտական տուրում նա սպիտակներով մրցելու է Սաբինա Ֆոյտորի հետ: Տաթեւ Աբրահամյանին Իրինա Զենյուկի հետ պարտիայում բավարարում է նույնիսկ ոչ-ոքին: Վճռորոշ նշանակություն կունենա նաեւ Բագինսկայտե-Կրուշ պարտիայի արդյունքը:

Մոուրինյուն գտավ «Բարսելոնին» հաղթելու միջոցը

Ֆուտբոլի Իսպանիայի «Արքայական գավաթի» 107-րդ խաղարկությունն ավարտվեց Մադրիդի «Ռեալի» հաղթանակով: Արքայական գավաթի եւ «Բարսելոնի» միջեւ կայացած գավաթային թեժ մրցավեճի ելքը վճռեց լրացուցիչ ժամանակում Քրիստիանու Ռոնալդուի խփած միակ գոլը: Մադրիդի «Ռեալը» 18-րդ անգամ դարձավ Իսպանիայի գավաթակիր: Վերջին անգամ թիմը նման հաջողության էր հասել 1993-ին: Իսկ «Բարսելոնն» իր պատմության մեջ 25 անգամ է տիրել պատվավոր մրցանակին: Ընդ որում 2009-ին կատալոնացիները Վալենսիայի «Մեստալիա» մարզադաշտում, որտեղ կայացավ գավաթի եզրափակիչը, հաղթել էին Բիլբաոյի «Ատլետիկին»:

Գավաթի եզրափակիչը «Ռեալի» ու «Բարսելոնի» միջեւ ընթացիկ մրցաշրջանում կայացած արդեն 3-րդ հանդիպումն էր: Առաջին շրջանում «Բարսելոնը» 5-0 հաշվով ջախջախել էր «Ռեալին», 2-րդ շրջանի հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի: Առջեւում եւս 2 հանդիպում է նախատեսված չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչում: Նշենք, որ Ժոզե Մոուրինյուն մարզչական իր կարիերայում 18-րդ տիտղոսը նվաճեց:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ժոզե Մոուրինյու («Ռեալ»)- Մրցակիցները հաղթելու հավասար հնարավորություններ ունեին: Մենք լավ խաղացինք առաջին խաղակեսում, «Բարսելոնն»՝ ընդմիջումից հետո: Բացառությամբ մի քանի սխալների, իմ սաներն էֆեկտիվ խաղ ցուցադրեցին: Յուրաքանչյուրը գիտեր, թե իրենից ինչ է պահանջվում: Միշտ էլ հաճելի է մրցանակներ նվաճելը: Հպարտանում եմ իմ թիմով, օգնականներով եւ երկրպագուներով, նաեւ ինձանով, քանի որ սա 4-րդ երկրի նվաճած գավաթն է:

Խոսեպ Գվարդիոլա («Բարսելոն»)- Նախ շնորհավորում եմ «Ռեալին» հաղթանակի համար: Մրցակիցը մեզ գերազանցեց առաջին խաղակեսին, մենք լավ հանդես եկանք ընդմիջումից հետո ու լրացուցիչ ժամանակում: Սակայն մեր բախտը չբերեց: Հարկավոր է մոռանալ այս պարտությունը: Առջեւում առաջնության խաղն է, հետո պետք է նախապատրաստվել չեմպիոնների լիգայի մրցախաղին: Հաղթելը միշտ էլ հաճելի է, սակայն կյանքը չի կարող միայն հաղթանակներից բաղկացած լինել: Յուրաքանչյուր պարտություն սիրում է աշխատել ինքդ քո վրա: Հուսով եմ, որ սխալներից դասեր կառնենք:

Վերադառնալով Մադրիդ, «Ռեալի» ֆուտբոլիստները բաց ավտոբուսով քաղաքում շրջելիս, վնասել են գավաթը: Թիմի պաշտպան Սերխիո Ռամոսի ձեռքից գավաթը վայր է ընկել ուղիղ ավտոբուսի անիվների առջեւ: Թեեւ ֆուտբոլիստը հավաստիացրել է, որ մրցանակը չի վնասվել, սակայն մինչեւ ակումբի թանգարանում գավաթը տեղադրելը, հարկ կլինի այն վերանորոգել:

Բերեզովսկին կողմ է Բորոդյուկի թեկնածությանը

Մերձմոսկովյան «Խիմկիի» եւ ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի դարպասապահ Ռոման Բերեզովսկին գտնում է, որ Ռուսաստանի հավաքականին ռուսաստանցի մարզիչ է հարկավոր: Նրա կարծիքով, այսօրվա դրությամբ հավաքականի գլխավոր մարզչի ամենահարմար թեկնածուն Ալեխանդր Բորոդյուկն է, որը ժամանակին ազգային ընտրանում օգնում էր Գուս Հիդինգին: Այս մասին Բերեզովսկին նշել է Sportbox.ru կայքի թղթակցի հետ զրույցում:

«Իմ կարծիքով ավելի լավ կլինի, եթե ազգային հավաքականը գլխավորի տեղացի մասնագետը: Ժամանակն է, որ Դիկ Ադվոկատի օգնական Ալեքսանդր Բորոդյուկն իր ձեռքը վերցնի հավաքականի ղեկը: Մանավանդ որ ներկայումս ռուսները բարդ իրավիճակում են գտնվում եւ նրա նշանակումը թիմին անհրաժեշտ խթան կլինի: Ամեն դեպքում գտնում եմ, որ ավելի վատ չի լինի: Օտարերկրացի մարզիչը պետք է կարողանա փոփոխել իր մենթալիտետը ու հարմարվել ֆուտբոլիստներին: Գուցե Հիդինգին դա հաջողվում էր, իսկ Ադվոկատին՝ դեռեւս ոչ: Ռուսաստանը պետք է 2018-ին հյուրընկալի ֆուտբոլի աշխարհի առաջնության մասնակիցներին ու ձգտի առավելագույնս հաջող հանդես գալ սեփական դաշտում: Սակայն չեմ տեսնում ֆուտբոլային այն հերթափոխը, որը կարող լինի դա իրականացնել: Իմ կարծիքով, այսօրվա ՌԴ հավաքականին բացի ագրեսիվությունից, պակասում է նաեւ խաղադաշտում առաջատար ֆուտբոլիստը», նշել է Ռոման Բերեզովսկին:

ԹԵՆԻՍ

Հայ թենիսիստուհիները կմրցեն Եգիպտոսում

Թենիսի Հայաստանի կանանց հավաքականն այս տարի եւս կմասնակցի ֆեդերացիայի գավաթի խաղարկությանը: Մեր թիմն ընդգրկված է եվրոֆրիկյան գոտու 2-րդ խմբում: Այստեղ ընդգրկված են նաեւ Վրաստանի, Թուրքիայի, Ֆինլանդիայի, Պորտուգալիայի, Մարոկկոյի եւ Բոսնիայի հավաքականները: Նախնական փուլում 7 հավաքականները կբաժանվեն 2 ենթախմբի, որոնցում հաղթողները կպայքարեն 1-ին խմբի երկու ուղեգրերի համար: Մրցումները տեղի կունենան մայիսի 4-7-ը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում:

Հայաստանի հավաքականի մարզական պատիվը կպաշտպանեն Անի Ամիրխանյանը, Օֆելյա Պողոսյանը, Նունե Խաչատրյանն ու Աննա Մովսիսյանը: Վերջինս կկատարի նաեւ մարզչի պարտականությունները: Այսօրվա դրությամբ Հայաստանի կանանց հավաքականը 222 միավորով դասակարգման ցուցակում 62-րդ տեղում է:

«Ինտերի» լուրջ հայտը

Իտալիայում կայացան երկրի գավաթի կիսաեզրափակիչ առաջին հանդիպումները: Միլանում տեղի հանդուն թիմի եւ «Պալերմոյի» մրցավեճում գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 2-2: Արդեն 4-րդ րոպեին Իբրահիմովիչը գլխի հարվածով առաջ մղեց «Միլանին»: Սակայն հետագայում Պաստորեն եւ Էռնանդեսը 2 անգամ գրավեցին «Միլանի» դարպասը: Դաշտի տերերին պարտությունից փրկեց Էմանուելսոնը: Պատասխան հանդիպումը կկայանա մայիսի 10-ին:

Եզրափակիչի ուղեգիր նվաճելու լուրջ հայտ ներկայացրեց «Ինտերը», որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց «Ռոմային»: Խաղի ելքը վճռեց 5-րդ րոպեին Դեյան Ստանկովիչի խփած միակ գոլը: Այդ խաղում «Ռոմայի» կազմում բացակայում էր թիմի ավագ Ֆրանչեսկո Տոտին: Նա անցյալ տարվա գավաթի եզրափակիչում միտումնավոր ոտքով հարվածել էր մրցակցին, որի համար որակազրկվել էր գավաթային 4 խաղով:

Ագբեկո-Մարես մենամարտը չի կայանա

Ապրիլի 23-ին Լոս Անջելեսում նշանակված Ժոզեֆ Ագբեկոյի եւ Աբներ Մարեսի մենամարտը չի կայանա: Պատճառը IBF-ի վարկածով թեթեւագույն քաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Ագբեկոյի հիվանդությունն է՝ իշիասը: Նա երկուշաբթի ժամանել էր Լոս Անջելես: Ինքնաթիռից իջնելիս Ագբեկոն սուր ցավեր էր զգացել գոտկատեղում՝ չկարողանալով ինքնուրույն նստել սպասող մեքենան: Նրան անմիջապես հիվանդանոց են տարել, որտեղ բժիշկներն ախտորոշել են իշիասի սուր նոպա: Ենթադրվում է, որ այն ինքնաթիռով երկարատեւ թռիչքի հետեւանք է:

Այժմ մրցամարտի կազմակերպիչները շատ կարգով Աբներ Մարեսի համար նոր մրցակից են փնտրում, որպեսզի ապրիլի 23-ին նախատեսված բռնցքամարտի երեկոն կայանա ամբողջությամբ: Թեկնածուներից մեկը 19-ամյա ճապոնացի Տոմոկի Կամեդան է, որը հաղթել է անցկացրած բոլոր 18 մենամարտերում: Սակայն նրա թեկնածությունը դեռեւս պետք է համաձայնեցնել Մարեսի եւ Showtime հեռուստալիքի հետ: Հիշեցնենք, որ նույն երեկոյի ընթացքում ռինգ դուրս կգան նաեւ Վախթանգ Դարչինյանն ու Յոնի Պերեսը:

Ամենահարուստը Դեյվիդ Բեքհեմն է

Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի տվյալներով 7-րդ տարին անընդմեջ անգլիական «Մանչեսթր Յունայթեդն» աշխարհի ամենաթանկ ակումբն է: Ակումբի արժեքը գնահատվում է 1,86 մլրդ դոլար: 2-րդ տեղում Մադրիդի «Ռեալն» է (1,4 մլրդ դոլար): Հաջորդ տեղերը զբաղեցնում են Լոնդոնի «Արսենալը» (1,19 մլրդ), Մյունխենի «Բավարիան» (1,048 մլրդ) եւ իսպանական «Բարսելոնը» (975 մլն):

Ամերիկյան «Լոս Անջելես Գելեքսի» թիմի կիսապաշտպան Դեյվիդ Բեքհեմը հերթական անգամ գլխավորում է աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստների ցանկը: Անցած տարի նա վաստակել է 40 մլն դոլար: Հաջորդ տեղերում են Քրիստիանու Ռոնալդուն (38 մլն) եւ Լիոնել Մեսին (32 մլն):

Տիխոնովը տարիքային ռեկորդ սահմանեց

Կայացան ֆուտբոլի Ռուսաստանի գավաթի քառորդ եզրափակիչ հանդիպումները: Մոսկվայի «Սպարտակը» «Լուժնիկիում» 2-1 հաշվով պարտության մատնեց Կրասնոդարի համանուն թիմին, որի կազմում բացակայում էր Յուրա Մովսիսյանը: Այդ խաղը հատկանշական էր նրանով, որ գրեթե 10-ամյա ընդմիջումից հետո սպարտակցիների կազմում կրկին հանդես եկավ Անդրեյ Տիխոնովը, որը թիմի մարզիչներից մեկն է: Տիխոնովը «Սպարտակի» պատմության մեջ դարձավ ամենատարեց ֆուտբոլիստը: Խաղի օրը նա 40 տարեկան 186 օրական էր: Նախկին ռեկորդը պատկանում էր Վասիլի Սոկոլովին, որը 1951-ին իր վերջին խաղը «Սպարտակում» անցկացրել էր 39 տարեկան 234 օրականում:

Մայիսի 11-ին կայանալիք կիսաեզրափակիչ խաղում «Սպարտակը» կմրցի ԲԿՄԱ-ի հետ: Վերջինս Սանկտ Պետերբուրգում 2-0 հաշվով պարտության մատնեց «Զենիթին»:

Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են «Ռոստովն» ու «Ալանիան»: «Ռոստովը» հյուրընկալվելիս 2-1 հաշվով առավելության հասավ Մոսկվայի «Դինամոյի» նկատմամբ: Ընդ որում հաղթական գնդակը հյուրերը խփեցին ավելացված ժամանակում: «Ալանիան» քառորդ եզրափակիչում պետք է հանդիպեր «Սատուռնի» հետ, որը ֆինանսական խնդիրների պատճառով մրցաշրջանի շեմին լուծարվեց:

Պարգեւավճարը կաճի

Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի մենախաղի այս տարվա հաղթողները 100 հազար ֆունտ ստեռլինգ ավելի կստանան, քան 2010-ի դափնեկիրներ Սերենա Ուիլյամսի եւ Ռաֆայել Նադալի պարգեւավճարն էր: Այս տարի պարգեւավճարը կկազմի 1,1 մլն ֆունտ ստեռլինգ:

Մրցաշարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը կաճի 6,4 տոկոսով եւ կկազմի 14,6 մլն ֆունտ ստեռլինգ (23,8 մլն դոլար): Այս տարի Լոնդոնում Ուիմբլդոնի մրցաշարը կանցկացվի 125-րդ անգամ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՎԱՃԱՌՔԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

22 մարիլի 2011
FAR-01-2011

1. «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի» Հայաստանի մասնաճյուղը (ՀՕՖ) հայտարարում է բաց մրցույթ իր սեփականությունը հանդիսացող ՎԱԶ 21213 եւ երկու ԳԱԶ 311000 մակնիշի մարդատար ավտոմեքենաների վաճառքի նպատակով:

2. Մրցույթին կարող են մասնակցել իրավաբանական անձինք, անհաս ձեռնարկատերերը, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

3. Մրցութային փաթեթները կարող եք ձեռք բերել ՀՕՖ-ի Հայաստանի գրասենյակից (Երեւան, Խորենացի 22): Մրցույթը տեղի կունենա ՀՕՖ-ի Հայաստանի գրասենյակում:

4. Գնային առաջարկները կարող են ներկայացվել, ՀՀ ք. Երեւան, 0010 Խորենացի 22 հասցեում՝ ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակ, ամեն օր՝ ժամը 10:00-ից-17:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, մինչեւ 2011 թ. մայիսի 4-ը:

5. Գնային առաջարկների ծրարները կբացվեն և մրցույթի արդյունքները կամփոփվեն 2011թ. մայիսի 5-ին, ժամը 15:00-ին:

6. Մրցույթն անցկացվելու է մեկ փուլով: Սացված գնային առաջարկները գնահատելուց հետո ՀՕՖ-ի մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող կճանաչի վաճառվող փոխադրամիջոցների համար առավելագույն բարձր և ընդունելի գնային առաջարկ /լավագույն առաջարկ/ ներկայացրած անձին՝ հիմնվելով շուկայում առկա գների վրա:

7. Գնային առաջարկների ծրարները կբացվեն և մրցույթի արդյունքները կամփոփվեն 2011թ. մայիսի 5-ին, ժամը 15:00-ին: Գնային առաջարկը պետք է պարունակի փոխադրամիջոցի համար առաջարկվող գինը և առաջարկը ներկայացնողի

ա/ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, կոնտակտային տվյալները,

բ/ իրավաբանական անձի կամ անհաս ձեռնարկատիրոջ դեպքում՝ անվանումը, ՀՎՀՀ, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, վկայականի համարը եւ կոնտակտային տվյալները:

8. Լավագույն առաջարկ չստանալու դեպքում ՀՕՖ-ն իրեն իրավունք է վերապահում մրցույթը հայտարարել չկայացած:

9. Մրցույթի հաղթողին կառաջարկվի կնքել ավտոմեքենաների վաճառքի համար առուվաճառքի պայմանագիր՝ հաղթող ճանաչվելու օրվանից սկսած 10 օրացուցային օրվա ընթացքում: Հաղթողը պարտավորվում է վճարել ավտոմեքենայի ամբողջ գումարը պայմանագիրը ստորագրելու օրը: Այդ անձի հետ գործարքը չկայանալու դեպքում, նախապատվությունը կարող է տրվել հաջորդ լավագույն առաջարկը ներկայացրած անձին կամ կարող է հայտարարվել մրցույթը չկայացած ճանաչվելու մասին:

10. Վաճառվող փոխադրամիջոցների տվյալներն են՝

Փոխադրամիջոցի անվանումը	Թողարկման տարեթիվը	Թափքի տեսակը	Վազքը	Գույնը
ՎԱԶ 21213	1994	Ունիվերսալ	25 727	սպիտակ
ԳԱԶ 311000	1999	Սեդան	250 732	սպիտակ
ԳԱԶ 311000	2003	Սեդան	232 660	արծաթագույն

11. Փոխադրամիջոցների տեխնիկական վիճակին կարող եք ծանոթանալ ՀՀ Ք. Երեւան, 0010 Խորենացի 22 հասցեում:

12. ՀՕՖ-ը որևէ պարավորություն չի կրում փոխադրամիջոցի վաճառից հետո ի հայտ եկած անսարքությունների, նեռառյալ՝ թաքնված թերությունների համար և չի ընդունի գույքային կամ որևէ այլ պահանջ կամ պարավորություն այդ կառակցությամբ:

13. Սույն հայտարարության հետ կարող եք ծանոթանալ նաև http://www.auto.am/

կայք էջում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝ ՀՕՖ-ի Հայաստանի մանաճյուղ՝ Վաղարշակ Խաչատրյանին, հեռ.՝ 010 52 66 60, 091 21 41 72:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հատատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ԲԸՇՁԲ -1/11

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ծառայությունների գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար Դատական ավտոմատացված համակարգի (Այսուհետ՝ ԴԱՀ) սպասարկման ծառայությունների մատուցումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ գնումների համակարգ՝ www.gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ Վ. Սարգսյան 5 հասցեով մինչև 29.05.2011 թվականը, հեռ. (010) 511-787

ՀՀ Դատական դեպարտամենտ
պետական կառավարչական հիմնարկ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ձեւ N 1

առ 01/01/11 թ.

Կազմակերպության անվանումը	«Լենդ-Գեյմ» ՍՊԸ	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Շահումով խաղի կազմակերպում	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		26411008996
Հարկ վճարողի հաշվառման համարը		00102421
Չափի միավորը		հազար դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երեւան, Ա. Խաչատրյան 29, բն. 25	
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Քարաքար-Թախրով, Ազնվուրի 27բ, առեւտրի եւ սպասարկման տարածք	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030		2083.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080		2083.0
II. Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200		249.0
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220		249.0
Հաշվեկշիռ	230		2332.0

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240		10.0
Կուտակված շահույթ	270		(13754.0)
Ընդամենը սեփական կապիտալ	300		(13744.0)
IV. Ոչ ընթացիկ պարավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարավորություններ	360	0.0	0.0
V. Ընթացիկ պարավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380		14800.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410		1165.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420		111.0
Ընդամենը ընթացիկ պարավորություններ	490		16076.0
Հաշվեկշիռ	500		2332.0

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ձեւ N 1

01/01/11 թ.

Կազմակերպության անվանումը	«Խասաս» ՍՊԸ	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Շահումով խաղի կազմակերպում	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		27111002835
Հարկ վճարողի հաշվառման համարը		01236089
Չափի միավորը		հազար դրամ
Գտնվելու վայրը	Կոտայքի մարզ, գյուղ Գառնի	
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվուրի, բնակելի կառուցապատման հողամաս տնտեսական շինությունով: ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Նոր քաղաքամաս 1 փող., 57 հողամաս, 1-ին տնտեսական շինություն	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	248.0	
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	11883.0	5416.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	12131.0	5416.0
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	224.0	144.3
Այլ դեբիտորական պարտքեր	180	50.0	
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	14527.0	6206.7
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	14801.0	6351.0
Հաշվեկշիռ	230	26932.0.0	11767.0

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50.0	50.0
Կուտակված շահույթ	270	6426.0	9440.0
Պահուստային կապիտալ	280	2277.0	2277.0
Ընդամենը սեփական կապիտալ	300	8753.0	11767.0
IV. Ոչ ընթացիկ պարավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ	310	10392.0	
Ընդամենը ոչ ընթացիկ պարավորություններ	360	10392.0	0.0
V. Ընթացիկ պարավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	7500.0	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	287.0	
Ընդամենը ընթացիկ պարավորություններ	490	7787.0	0.0
Հաշվեկշիռ	500	26932.0	11767.0

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեւ N 2

01/01/10-01/01/11

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորոկան)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորոկան)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ	010	231944.0	213344.0
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ինքնարժեք	020	131979.0	115086.0
Համախառն շահույթ (վնաս)	030	99965.0	98258.0
Վարչական ծախսեր	050	98820.0	92024.0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթ (վնաս)	060	1145.0	6234.0
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	77.0	
Գործառնական շահույթ (վնաս)	090	1068.0	6234.0
Ֆինանսական ծախսեր	100	1336.0	941.0
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	268.0	(2279.0)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	-	3014.0
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	-	3014.0
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	-	3014.0

Ղեկավար՝ ***ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ***

Աուդիտորական եզրակացություն

«Խասաս» ՍՊԸ ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խասաս» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերության) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական ապացույցները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական ապացույցները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

«ԱՎԱ-Աուդիտ փարթներս» ՍՊԸ
Տնօրեն
Աուդիտոր
Երեւան
03 մարիլի 2011 թ.

Ա. Պողոսյան
Ա. Պողոսյան

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ձեւ N 1

31/12/10 թ.

Կազմակերպության անվանումը	«Բեթոլանեսթ» բուքմեյքերական ընկերություն» ՍՊԸ	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		27311003820
Հարկ վճարողի հաշվառման համարը		01550331
Չափի միավորը		Մեկ հազար ՀՀ դրամ
Գտնվելու վայրը	Տիգրան Մեծի 36,9	հեռախոս 569-769
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Տիգրան Մեծի 36,9	

Ենթարկված է աուդիտի
«Էկոնոմիկս» Աուդիտ՝ ՍՊԸ կողմից
Լիցենզիա 085
տնօրեն/աուդիտ Հ. Դանիելյան

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	74	-
Ոչ նյութական ակտիվներ	030	88,220	88,220
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	88,294	88,220
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	140	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	15	39
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	488	813
Այլ դեբիտորական պարտքեր	180	-	2,202
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	40,413	54,027
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	41,056	57,081
Հաշվեկշիռ	230	129,350	145,301

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	80.000	80.000
Կուտակված շահույթ	270	18,828	37,813
Ընդամենը սեփական կապիտալ	300	98,828	117,813
V. Ընթացիկ պարավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	265	614
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	16,116	11,568
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	5,436	923
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	1,566	2,051
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ	430	6,378	8,472
Այլ կրեդիտորական պարտքեր	450	760	3,860
Ընդամենը ընթացիկ պարավորություններ	490	30,521	27,488
Հաշվեկշիռ	500	129,349	145,301

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեւ N 2

01/01/10-31/12/10

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորոկան)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորոկան)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ	010	2,793,752	2,910,083
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ինքնարժեք	020	(2,509,218)	(2,470,437)
Համախառն շահույթ (վնաս)	030	284,534	439,646
Վարչական ծախսեր	050	(271,309)	(401,184)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթ (վնաս)	060	13,225	38,462
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	-	58
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	(2,032)	(1,532)
Գործառնական շահույթ (վնաս)	090	11,193	36,988
Ֆինանսական ծախսեր	100	(287)	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	20	(3)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	10,926	36,985
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսը նվազեցումը	160	10,926	36,985
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	(771)	-
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	10,155	36,985

Ղեկավար՝ ***Բաղյան Վանյա***
Գլխավոր հաշվապահ՝ ***Մկրտչյան Արաքսյա***

Աուդիտորական եզրակացություն

«ԲԵԹՈԼԱՆԵՍ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ
2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԲԵԹՈԼԱՆԵՍ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Աուդիտը ներառում է ընկերության հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալի, դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտը մեր կողմից իրականացվել է աուդիտորական գործունեության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, աուդիտի ստանդարտների եւ գործնական փորձին համապատասխան: Աուդիտի ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ եռաշխիք ձեռք բերելու նպատակով:

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել ընկերության 2010 թ. գործունեությունը հաստատող այն հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի հաշվեմնումն ու համապատասխան ձեւակերպումների ճշտությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենք գտնում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է տալիս հետեւյալ եզրահանգման համար:

Մեր կարծիքով «ԲԵԹՈԼԱՆԵՍ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ 2010 թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, բոլոր էական առումներով, տալիս են ընկերության 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին՝ ճշմարիտ ու իրական պատկերը:

«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ
տնօրեն/աուդիտոր
(աուդիտորի որակավորման վկայական թիվ 068)
11 մարիլի 2011 թ.

Հ. Դանիելյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 21.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: